Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1377

891.99
9-46

# Զ Գ Ա Ց Մ Ո Ւ Ն Ք

Գ-46
19 NOV 2011

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

---

# ԶԳԱՑՄՈՒՆՔ

ԽՄԲԱԳՐԵՑ

ԳՐԻԳ. ԲԱԼԱՍԵԱՆ

6165

ՎԵՆԵՏԻԿ–Ս. ՂԱԶԱՐ

1902

12.04.2013
29577
679-93

# ԶԳԱՑՄՈՒՆՔ

## Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Մեռա՜ր և դու, ծե՛ր Նահապետ,*
*Հայ դպրութեան հսկա՛յ վարպետ,*
*Բայց վաստակդ չէ՛ աննշան,*
*Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։*

*Ո՛հ չքացա՜ր, հա՛յ գրական,*
*Հսկա՛յ տաղանդ անզուգական.*
*Բայց քո գործը չէ՛ աննշան,*
*Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։*

*Մահը խլեց, ո՜հ, քեզ ընդ միշտ*
*Եւ պատճառեց մեզ ծանր վիշտ.*
*Բայց քո մահը չէ՛ աննշան,*
*Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։*

*Աւերակաց դո՛ւ հէք երգիչ,*
*Ընդ միշտ լռեց երգդ դիւթիչ.*
*Բայց բանաստեղծ չե՛ս աննշան,*
*Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան:*

*Դո՛ւ անձանձիր հայ հնախօս,*
*Այժմ դարձար առ միշտ անխօս.*
*Բայց հնագէտ չե՛ս աննշան,*
*Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։*

Ո՛հ, սլացա՛ր, քա՛ջ հայկաբան,
Եւ հնազէ՛տ ատենաբան
Բայց հայագէտ չե՛ս աննշան,
Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։

Ո՛հ, ննջեցի՛ր, ծե՛ր Նահապետ,
Մխիթարեան ժի՛ր վարդապետ.
Բայց դու ռաբբի չե՛ս աննշան,
Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։

Դու կանգնեցրիր քեզ մի արձան,
Որ կը լինի մեզ յուշարձան.
Անմահութեան այդ քեզ նշան,
Ո՛վ դու Ղևոնդ Հայր-Ալիշան։

Թո՛ղ սաւառնի՛ անմահ հոգիդ
Եւ խունկ ծխեն յիշատակիդ.
Անմահութեանդ այդ է նշան,
Ով հանճարեղ Հայր-Ալիշան։

Ես համակուած անհուն վշտով՝
Երգ հիւսեցի տխուր սրտով.
Արդ ձօնում եմ երգս աննշան
Յիշատակի՛դ, Հա՛յր-Ալիշան։

Ուսուցիչ՝ Խաչատուր Բաբայեանց:

1901թ. 17 Նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ:

---



## ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

(«Մուսա» անտիպ պատմ. պօէմայից)

---

* * *

Առաւօտ էր, հորիզոնը
Բոցնկւեցաւ ալ բոցով
Եւ երկինքը շառագունեց,
Որպէս արեան կարմիր ծով։
Արեգակը իր հրեղէն
Նարօտները տարածեց
Եւ երկնքի ամպիկները
Ոսկով օծեց ու նախշեց:
Եւ բնութեան թագաւորը
Լեռան ուսը վեր ելած
Արքայական կապոյտ վրանից
Իր շողերը թափեց ցած։
Խաւարի դէմ մաքառելով՝
Նա վերացաւ կամարը
Եւ ոսկեհուռ իր վահանով
Պատսպարեց աշխարհը։

* * *

Եւ արեգի վառ շողերը,
Որպէս ուրախ աչքալիս,
Ցնծութիւնով, խնդութիւնով
Լցրին ամբողջ Ագուլիս։
Ձոր ու խոպան, բլուր ու վայրի,
Լերկ, ապառաժ լեռներում
Գեղադալար Ագուլիսը
Տարածուել է խոր ձորում:

Իբրև օւազ կամ ամայի
Անապատում մի ապատ.
գեղեցի՜կ է նա իր կանաչ
Այգիներով ցօղապատ:
Արսու, Գինդար, Չուռի, Սէթից
Լեռները չոր ու խոպան
Ծառաստանը պահպանում են,
Իբրև արթուն պահապան:

* * *

Ագուլիսի սարալանջում
Շէն տները սփռուած՝
Ըստւերախիտ ծառերի մէջ
Տարածւած են ու ցրւած:
Նայի՛ր ահա ձորի գլխին՝
Որպէս ամրոց դարաւոր՝
Կանգնած է լուռ Թովմայի սուրբ
Մենաստանը փառաւոր:
Ամեն կողմից շրջապատւած
Աշտարակով վիթխարի,
Սուրբ հաւատը պաշտպանումէ,
Իբրև հերոս քաջարի:
Նորա հսկայ գմբէթները
Դէպի վեր են ամբառնում
Ու երկնային կամարի հետ
Սիրով բուռըն համբուրւում:

* * *

Իսկ գետակը ձորի միջով՝
Քարափները մաշելով՝
Նիգիղէհից ըշտապումէ
Արաքսի մօտ վշշալով:
Նա անդադար ճիգ է անում,
Նա շտապում է ու վազում,
Բայց Արաքսին դեռ չըհասած-
Բարակւում է, նըւազում...



Այնտեղ, հեռո՜ւ, Քամքու լեռը
Կանգնած է լուռ ամպի տակ,
Գլուխը ծածկած ու փաթաթած
Իր չալմայով ըսպիտակ:
Իբրև շքեղ մի ժապաւէն՝
Արծաթափա՜յլ ու սիրուն՝
Գետնի վերայ տարածւել է
Մայր Արաքսը գալարուն:

17 Ապրիլ, 1902, Թիֆլիս:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

---

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

## ԱՄԲՈԽԻ ԿՈՉԸ

Արի պօէտ, բարի պօէտ
Իրգդ հիւսիր մեր ցաւից,
Ընկերացիր մեր սրտի հետ
Թեթևանանք հոգսերից:

Վիշտը շոյող ու փայփայող
Երգը դարձաւ ձանձրալի
Եւ ողբ ու լաց մխիթարող
Նուագն էլ չէ՛ ցանկալի:

Երգի՛ր դու մեզ բուռն ցայտմամբ
Սրտի բողոքն անմեղի.
Նշաւակի՛ր անզուսպ ցասմամբ
Բռնութիւնը ուժեղի:

Արի՛ պօէտ, բարի պօէտ
Երգդ հիւսիր մեր ցաւից.

Երգդ ապրի մեր սրտի հետ
Թեթևանանք հոգսիրից…։

2 Մարտի 1902
ԹԻՖԼԻԶ

---

## ԼԱՑԻ ԱՂԲԻՒՐ

Կար ժամանակ, երբ բարձունքից
Խիզախ ազատ մի երգով
Նա քարափի արանքներից
Ցայտում էր յորդ հոսանքով.
Ե՛ւ երգում էր աղմկալի
Ե՛ւ անընդհատ զրուցում
Չարս ու գեղջուկ ջահելների
Փզփզանքին մասնակցում։
Մեր խեղճ գիւղի արտ-արօտիք
Նորա յոյսով էր ապրում.
Մեր նորատունկ ծառ ու ծաղիկ։

---

Եկաւ սակայն ժամանակը
**Ա՛յլ ժամանակ սև օրի,**
Եւ աւերեց նորա ակը
Փակեց լեզուն աղբիւրի։
Այդ օրերից մինչեւ այսօր
Էլ չէ՛ երգում աղբիւրը,
Կաթ-կաթ, ասես, ջահիլ ազնւոր,
Լացում է իր սև օրը…
Լացում է նա. և վաղեմի
Էլ չէ լսում խոխոջում.
Լացում է նա… **Լացի աղբիւր**
Այժմ նորան են կոչում։

5 Ապրիլ 1902
ԹԻՖԼԻԶ։



## ՍԻՐՈՅ ԶՈՀԸ

Ամեն անգամ, երբ տեսնում եմ այն խելացնոր
(դժբաղդին,
Որը մռայլ քարշ է գալիս, անիծելով իր բաղդին,
Ուզում եմ թէ սիրտըս պոկեմ, դնեմ նորա կրծքի տակ,
Ա՛ռ քեզ, եղբա՛յր, ասեմ նորան, թող ե՛ս կրեմ քո
(տանջանք։

Ես ուզում եմ մօտ կալ նորան, մշտակցելու,
(շոյելու,
Սիրոյ ցաւից շանթահարուած նորա հոգին բուժելու.
Ա՛յս ուզում եմ գոնէ հարց տալ, մի՛ խօսք լսել նո_
(րանից,
Տանջուած եղբայր, այդ ո՞վ արդեօք քեզ անջատեց
(քո եարից։

Բայց վախում եմ թէ մօտ գալովս խորտակեմ
(թոյն-անդորրը
Նորա սրտի. և իմ հարցով յիշեցնեմ այն սև օրը…
Վախենում եմ, վա՛յ թէ յանկարծ վէրքը նորա պա-
(տառի
Եւ պլպլարից նորա հոգին նորից ցնցւի սարսուռի,..

Եւ ամեն օր, երբ տեսնում եմ նորան միմակ անց_
(նելիս
Քսու մարդկանց հալածանքից խուսափելիս կամ
(լալիս,
Քիչ է մնում սիրտս պոկեմ, դնեմ նորա կրծքի տակ,
Առ քեզ, եղբա՛յր, ասեմ նորա, թող ես կրեմ քո
(տանջանք…

15 Ապրիլ 1902
ԹԻՖԼԻԶ։

---

## ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Մաշկեղէն մէջքին
Ուղտի ստև հագած
Մեծ կարապետն էր
Անցնում բորբոքուած.

Յաղթանդամ հասակ
Ձեռքին գաւազան
Բոցիկ հերարձակ
Դէմքում անսասան

Նա քարոզում էր
Թմրած մարդկութեան,
Թէ հասել է ժամն
Ապաշխարութեան.

Կգայ Փրկիչը,
Կանի դատաստան,
Կազատի լուծից
Ամբողջ Հրէաստան.

Նա կխորտակի
Գահը բռնութեան,
Դուք կառաջնորդուէք
Լուսով փրկութեան.

Այնտեղ կգտնէք
Եդեմ կորցրած
Նախնեաց ազատ կեանք
Ձեզ աւանդ թողած.

Այնտեղ կգտնէք
Դուք Արքայութիւն
Վաղուց պատրաստած
Ձեզ և ձեր որդուն.

Դէ՛հ, շուտով ելէ՛ք
Եւ մկրտուեցէ՛ք,
Փրկչի գալուստը
Դուք ընդունեցէք:

Եւ դո՛ւք մոլորուած
Գծուծ հարուստներ
Թողեցէք ձուլած
Ձեր ոսկի հորթեր,

Ահա տապարը
Արմատին դրած
Վատթար ծառերը
Կնգնին տապալուած:

Ձե՛զ եմ յորդորում.
Ձե՛զ եմ կոչ անում,
Ապաշխարեցէ՛ք
Ժամն է մօտենում

Այսպէս Յովհաննէս
Քարոզով ազատ
Անցաւ բազմաթիւ
Քաղաք անապատ:

Բայց բիրտ ժողովուրդ
Փարիսեցիներ
Եւ գծուծ հարուստ
Շատ մեծատուններ

Չէին մօտենում
Ապաշխարելու
Դարերով բարդուած
Կեղտից սրբելու,



Մօտենումէին
Այնպիսիք միայն,
Որոնք զոհ էին
Կոպիտ բռնութեան

Մօտենում էին,
Սրբւում ջրով,
Եւ երդւում էին
Փրկչի անունով:

* * *

Այն ի՞նչ խնջոյք է
Շքեղ պալատում,
Ուր ուրախութեան
Փողեր են հնչում.

Այսօր մեծ տօն է
Հրէաստանում,
Ուր մեծ արքայի
Ծնունդն են տօնում:

Եւ Հերովդէսը
Կուսակալներով
Կերուխումի մէջ
Հրճւումէ սիրով:

Ահա ներս եկաւ
Քայլերով յուշիկ
Քնքոյշ պար բռնած
Մի չքնաղ աղջիկ.

Մէջքը նազանի
Աչքերում կրակ
Կուրծքը հոլանի
Մերկ ու հերարձակ

Մատաղ հրապոյրով
Սկսեց կաքաւել,
Ներկայ հիւրերին
Խելքահան անել.

Ասա՛, իմ զաւակ,
Ի՞նչ է քո ուզած,
Կոչեց Հերովդէս
Հրճւանքից յուզւած:

Տէ՛ր, Յովհաննէսի
Գլուխը տուր ինձ,
(Այսպէս էր կոյսին
Պատւիրած մօրից)

Եւ Ներօնային
Ժայթքից հրաման
Մեծ Քարոզչին
Տարան գլխատման...

* * *

Չկար Յովհաննէս...
Եւ աշակերտներ
Մոլար հօտի պէս
Ընկան սար ձորեր.

Եւ մինչ այսօր էլ
Հրէայ սերունդը
Ակնկալումէ
Փրկչի գալուստը...

23 Ապրիլ 1902
Թիֆլիզ.

## ՀԱՅ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

I

### ԱԽ ԹԷ՝ ԻՆՁԻ

Ա՜խ թէ ինձի թեւեր տային,
Թեւեր ուժեղ, թեւեր տոգուն...
Ազատութիւն իմ թոյլ կամքին
Ահեղ թռիչք մի իմ հոգուն...
Յաւերժական մի շունչ զօրեղ,
Որպէս զեփիւռ մի հեշտատար,
Ազա՜տ, արձա՜կ, ամբի՜ծ, անմե՜ղ.
Որպէս երկնի ժըպիտ պայծառ...
Երանական ցընորք քաղցրիկ
Ես դէպ հարաւ կըթռչէի,
Ուր փայլում է սիրոյս աստղիկ
Այնպէ՜ս թովիչ ու նազելի...
Եւ հէգ սրտիս սէրը անգին
Կըզգէի էն ծով-սրտում,
Ա՜խ թէ ինձի թեւեր տային.
Թեւեր ուժեղ, թեւեր տոգուն...

---

II

### ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞ւ այդպէս պանդուխտ Եղբայր տառապեալ
Քո ցուրտ կրծքից լսւում է խուլ հառաչանք...
Ա՜խ ինչո՞ւ է դէմքդ վշտոտ ու մըռայլ,



Ինչո՞ւ այդպէս քեզ ճնշում է զազիր կեանք...
Ինչո՞ւ այդպէս այս ցրտաշունչ սազախին
Տխուր մեկնած սառ ձեռքերը ցրտահար,
Դու խնդրում ես չար մարդկանցից մոլեգին
Մի աննշան ողորմութիւն քեզ համար...
Ո՜հ մի փնտռիր դու նրանց մօտ ըսփոփանք,
Նոցա հոգին, նոցա սիրտն է քար ու մութ...
Նոքա չունին ամբիծ վիշտ ու տառապանք,
Նոքա չար են, նոքա անխիղճ ու անգութ...
Թէպէտ ճընշում է քեզ բաղդը անարդար,
Բայց դու բարձր ես, դու վսեմ ես անսահման
Դու մըցում ես չար կեանքիդ դէմ անդադար
Ճակատըդ դեռ կ'այրէ ուխտդ սըբազան...
Թէպէտ խեղճ ես, այդպէս մերկ ու տխրամած
Բայց ճշմարիտ, արդար կեանքի ես տիպար,
Ճշմարտութիւնն ես դու այո՛ հալածուած
Քեզ է փնտռում, քեզ է երգում իմ քընար...

---

III

### ՎՍԵՄ ԿՈՅՍԸ

Կենսաբորբոք դէմքին ժըպիտ
Մատաղ ծաղիկն էր բուրում.
Եւ երկնքի լուսափըթիթ
Կոյսը նորան համբուրում....
Բայց նորա մօտ տխուր, անտէր
Թօշնած ծաղիկն էր ողբում.
Եւ նոյն կոյսը քաղցրանուէր
Բիւրեղ-արցունքը սըրբում...

---

IV

## ԱՌԱՋ

(*Նադսոնից*)

*Առաջ մոռացիր քո տանջանքներ դառն*
*Յետ մի նահանջիր փոթորկի առաջ,*
*Կռուի՛ր ապագայ նոր լոյսի համար,*
*Որ կըշողշողայ մթնում անթափանց...*
*Գործի՛ր քանի դեռ ձեռնիդ են ուժեղ,*
*Երբէք մի կորցնիր յոյսը կենսատու․*
*Յանուն գիտութեան և լոյսի զօրեղ*
*Քո ազնիւ կերոնը բարձրացուր դու...*
*Թող քեզ դրոշմեն դառն անարգանքով,*
*Թող կշտամբանքը անիմաստ, պատիր,*
*Քո վրայ գցէ անզուսպ զարոյթով*
*Խուժանից ձըգած անօրէն վճիռ...*
*Շարժուի՛ր մի ընկնիր փոքրոգի սրտով,*
*Գնա՛ առաջ քո շաւղով կոխոտուած,*
*Եւ դիմաւորիր մատղահաս կրծքով*
*Բոլոր շանթերին կեանքի վաստակած...*
*Զայն տուր քնածներին մառախուղից խոր,*
*Դու անկեալներին ցաւօք ձեռք մեկնի՛ր,*
*Եւ ճշմարտութեան խոստումը հզօր*
*Իբրև վառ ճաճանչ մարդկանց մէջ գցիր...*

---



## ՀԱՅՐ Ղ․ ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ․

Զմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
Գարունն Յարտաղ գայ ի թուփ վարդենեաց։
Բլբուլ Աւարայրի Ղ․ Ալիշան․

*Լուսաբաց է․ պղտոր, պղտոր,*
*Ալիքների արցունքով,*
*Ծեր Տղմուտն է ոլոր-մոլոր*
*Արագ սահում սև սգով․*

*Լուռ է ափերը Տղմուտի*
*Դատարկ դաշտը Աւարայր,*
*Զի լսուում երգը արտոյտի*
*Լուռ է բլբուլ սիրահար․*

*Ո՞ւր է բլբուլն այս վայրերի*
*Ո՞ւր է երգիչ-Նահապետ․*
*Ո՞ւր է բլբուլն Աւարայրի*
*Ո՞ւր ասացէք, դաշտ ու գետ․*

*Ո՜հ ձայն չկայ․ լուռ է դաշտը․*
*Զկայ կեանքի է՛լ նշան․*
*Մենակ պղտոր, ծեր Տղմուտը*
*Մրմնջում է Ալի՛շան...*

*Ալիքների հառաչներով*
*Գետն երգիչն է որոնում,*
*Աւարայրի մրմունջներով*
*Պղտոր, պղտոր ոլորում...*

*Ոլորում ու գալարւում է*
*Որպէս մի օձ վիրաւոր․*
*Ծեր Տղմուտը արտասւում է*
*Յուսահատ է, ցաւը խոր...*

1901 *թ*, *Ղզլար*․
*Մ․ ՄԻՍԱՔԵԱՆՑ*․

## ԻՄ ԵՐԳԸ

Քընարը ձեռքիս
Լերկ ժայռի կրծքին
Հրճուանքը սըրտիս,
Երգում սրտագին…

Սէ՛ր էի երգում,
Սէ՛ր Սրտի համար.
Արտասունք էր երգս
Վշտերի գոհար…

Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ.

---

## ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Հեռու սարերից, անծայր երկնքից,
Մի երգ է հնչում յաւիտենական.
Եւ տիեզերքի խօլական երգից
Մէկից զարթնումէ օձը հոգեկան.

Եւ զալարւումէ հոգուս խորերում
Սեղմած վշտերիս անհուն իրանը,
Եւ յոխորտանքով հնչում, երերուն,
Եւ նորից մտնում իր սև դարանը…

Հնչումէ, հնչում յաւիտենական
Արտազու երգը ցաւօտ սրտիս մէջ,
Արտցունք է ծորում սիրտըս մշտական
Եւ թունաւորում խոհերս անշէջ…

1901 XII $_{19}$ Բալախանի

Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ



## ԿԵԱՆՔԻ ԹՈՅՆԸ

Ալ էլա՛, էլա՛ սիրտըս
Կոքուլի թէլ ա սիրտըս
Քանց Լալէն կարմիր չ'էր
Բաց անիմ սև ա սիրտըս
Ժողովրդ.

Երբ աստղերը մութ գիշերին
Փայփլումեն երկնքում,
Է՛լ վերջ չկայ իմ յուշերին
Լուռ զարթնումեն իմ հոգում.
Աստղերի պէս փայլուն օրեր
Անմեղ ժպիտ ու ծիծաղ
Ինչպէս լուսնի շողու շաղեր
Թռան, կորան ա՜խ, շատ վաղ.
Կեանքը անե՛ղ, դաժան կեանքը
Բիւր ցաւերի բոյլ դարձած,
Մի՛շտ խեղդումէ իմ հեծծանքը
Կեանքը թոյնի է փոխուած.
Թոյն է ծորում նոյն իսկ կոյսի
Սև, սևորակ աչերից.
Օ՛հ, էլ չկայ նշոյլ յոյսի
Կեանքի տխուր խաղերից
Թոյն ու թախիծ է միշտ տիրում
Կեանքի բոլոր խաւերում.
Կեանքը տխուր, կեանքը տրտում,
Էլ ես ի՞նչ եմ պըտրտում…

1898 թ. Յունվ. 12-ին
ԹԻՖԼԻԶ. Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ

---

## ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԱՐՏՑՈՒՆՔՆԵՐ

*Ո՛րքան ես ջերմ զգացմունքներ*
*Ունիմ հոգուս խորերում,*
*Որքա՜ն է՛լ լեղի արտասունքներ*
*Նրանց ճնշում, երերում...*

*Կեանքը իր դաժան պատկերով*
*Արտասունքներ է ստեղծում·*
*Զգացմունքներս մխալով՝*
*Կեանքի ճահիճը կոծում...*

1899. II/8. *Բալախանի.*
*Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ*

---

## ԱՐՏԱՍՈՒՔ ԵՒ ՎՐԷԺ

*Ես արտցունք կուզեմ,*
*Որ քար սրտերը մեկից տաքանան*
*Եւ հալւին ինչպէս արճիճը քուրում.*
*Կամ այս աշխարհից ընդմիշտ չքանան*
*Ինչպէս մի երազ քնոտ աչերում...*
*Ես վրէժ կուզեմ,*
*Որ բռնաւորին իսկոյն ապտակէր*
*Վար քաշէր իրան արիւնոտ թախտից·*
*Եւ մոլեգնաբար երեսին թքէր*
*Ու հեռացնէր այդ անարգ բախտից...*
. . . . . . . .
*Ես արտցունք կուզեմ, խեղդող ու աղի·*
*Ես վրէժ կուզեմ, թունոտ, կատաղի...*

1901. XII/18
*Բալախանի.*
*Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ*



## ԺԱՅՌԸ

*Կանգնած եմ հսկայ ժայռի կատարին*
*Եւ ո՞րքան ազատ է սիրտըս խըփում,*
*Գետը կատաղած շաչում է քարին,*
*Սիրտս է՛լ լայնացած ուժգին տրոփում.*

*Գետն է շառաչում, շաչում ժեռ քարին,*
*Ժայռն անտարբեր է. մենակ ու հպարտ.*
*Եւ ուշք չի դարձնում գետի խաղերին,*
*Կանգնած է որպէս մի հսկայ անպարտ...*

*Ա՛խ, ես կուզէի, որ այդ վայրկեանում*
*Հպարտ լինէի այդ սև ժայռի պէս,*
*Որ այս կրքերի անծայր ովկեանում*
*Մարդիկ սողալով անցնէին մօտէս...*

901 *թ. Նոյեմբ.* 9*-ին.*
*Գրօխշադոկայա գիւղ*
*Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ.*

---

## ՀՈՎԸ

*Զով գիշեր է. քամի չկայ*
*Անուշ ննջումէ ժայռը·*
*Մեղկ զեփիւռը կ՚շնկշնկայ*
*Շոյում, սլլումէ հովը·*

*Որպէս խաղաղ մի վեհութիւն*
*Լուռ ծփումէ ծովն ուրախ.*
*Ալեաց մեղմիկ անդորրութիւն*
*Չի խանգարում դարդ ու ախ...*

Այդ վայկեանին ողջ էութեամբ
Ուզւել կուզեմ յատակում,
Որպէս զի այդ անդորրութեամբ
Քիչ յագենամ այս կեանքում։

901 թ. Նոյեմբ. 6—Դերբենդ.
Մ. ՄԻՍԱՔԵԱՆՑ

---

## Ո՛Հ, ԼՌԷ՛, ՍՈԽԱ՛Կ

Ո՜հ, լռէ՛, սոխա՜կ… աւեր դաշտերում
Քո գիլ երգերը էլ լսող չկայ…
Միթէ չե՞ս լսում… ողբ են մրմընջում
Խո՜ւլ գիշերներին լեռները հըսկայ..
Մեր խեղճ աշխարհում խորունկ ցաւերի
Վէրքն է մխո՜ւմ, աղի արցունքի
Հեղեղն է վազում… Հառա՜չ մայրական
Եւ խաղաղութիւն լո՜ւռ, նւիրակա՜ն…

Ո՜հ, թշուա՛ռ Սոխակ էլ ի՞նչ ես փնդրում
Սե՜ւ ծոցերի մէջ, ուր մահն է իշխում,
Ուր վայրագ քամին մի խորո՜ւնկ գաղտնիք
Թևերին առած փչում է մեղմիկ.
Ուր ցաւն է անխօ՜ս, ուր վիշտը-հանգա՜ծ,
Գիշերը՝ խաւա՜ր, գետերը-անձայն.
Ուր արիւնն է ծո՜վ, դաշտերը՝ խամրա՜ծ.
Ուր մեր կըսկըծից լեռները ճեղքւան…

Անցի՛ր, խեղճ թռչնի՜կ, էլ մի՛ վըրդովի՛ր
Խաղաղութիւնն այդ համատարած,
Ո՛հ, լռէ՛, սոխա՛կ, էլ մի՛ խըռովի՛ր
Լո՜ւռ շիրիմները սուրբ նահատակաց…
Դու վարդ ես փնդրում, շուշան շողշողուն,
Վառ-արշալոյսի շողեր փայլ-փըլուն,
Սէր ես որոնում, կամ բուրմունք ծաղկի,
Եւ կամ հայելին մաքուր վտակի..



Թռի՛ր, սիրելի՛ս, երգի՛ր դու այնտեղ
Ուր դեռ չէ մտել **Սե՜ւ մահը Ահեղ**…
Ուր դեռ փթթումէ Ալ-վարդը բացւած։
Ա՜խ, մեր սարերում արիւն է մխում
Եւ բոսորային ծիրանի հագած.
Հա՛մըր գետակը ափերն է քերում…
Մեր սե՜ւ սրտերէն արուն կը կաթէ.
Ո՜հ, լըռէ՛ սոխա՛կ… Էլ հէչ մի՛ երգէ՛…

1901 թ. 27Ն, Սեպտ.
Նոր-Բայազէտ. ԱՐՏԱՇԷՍ ՂԱՐԻԳԵԱՆՑ

---

ՀԱՅ ԱՇՈՒՂԻՆ

## ՆՒԷՐ ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆՑԻՆ

Երգէ՛. հա՛յ աշուղ… Երգըդ տխո՜ւր է.
Մեր սիրտն էլ վըշտի սեւ-խանձարուր է…
Այս դառն օրերին, խո՛ւլ գիշերներին
Մեզ ողբ յօրինի՛ր… Թող մէկի՛կ-մէկիկ
Թափւին աչքերէս աղի արցունքներ,
Թող նոքա քամւին շիթերով մանրիկ
Որպէս աշունքւայ անձրևի կաթեր…
Մեր սուր կըսկիծը, մեր վէրքը խորունկ
Քո սըրտիդ մէջը թող կըրակ վառեն,
Մեր խոր վըշտերը, մեր լացը ծածուկ,
Թող քո վեհ հոգին վըրէժով այրեն…
Երգէ՛, հայ աշուղ, երգըդ սիրո՜ւն է,
Մեր սիրտն էլ խորունկ գունդ-գունդ արուն է…

Ոլորուն Երգըդ թող անուշ հնչէ՛,
Որպէս մըրմունջը վըշտացած ոգու,
Թող նա լա՛ց լինի, մեղմիկ հառաչէ
Որպէս հեծեծանք լացող ուռենու…

Մեր սիրտն է նարա՛, մեր արցունքը՝ քար,
Մենք հալա՛նք, մաշա՛նք թըշնամու թըրից․
Մեր վրէժը՝ խոր, իսկ լեզուն տկա՛ր,
Մենք կըրակւում ենք անյագ զայրոյթից…
Ա՜խ, մենք արտասուե՜լ, մենք ողբալ կուզենք
Երգի՛ր, ա՛յ աշուղ, մեզ քընքուշ տաղեր,
Կըրակն է վառման—մենք հովնալ կուզենք
Երգի՛ր, ա՜յ աշուղ, մեզ անուշ խաղեր…

Մեր սե՜ւ-վաթանէն, արնոտ ձորերէն
Ցո՛ւտ արա, աշո՛ւղ, մեզ մի խապա՛ր տուր,
Մռայլ դաշտերէն, աւեր տներէն.
Մեզ մի բան պատմի՛ր… թող լինի՛ տխուր…
Գովի՛ր, Հա՛յ աշուղ, Երկնային լեզւով
Սուրբ հերոսների ոսկորներն անթաղ,
Պատմի՛ր, ա՛յ աշուղ, թէ ի՜նչպէս նոքա
Անէծք կարդալով ընկան լո՜ւռ, դանդաղ…
Երգէ՛․ ախպէ՛ր ջան… Երգըդ վշտո՞տ է,
Մեր վառման սիրտն էլ երգի կարօտ է…

ԱՐՏԱՇԷՍ ՂԱՐԻԲԵԱՆՑ

---

## ԷՆ ԳԻՇԵՐԻՆ…

Է՜ն գիշերին, լո՜ւռ գիշերին
Մեծ կըռիւ կար էս դաշտում,
Արիւնո՛տ դաշտ, իմ խեղճ եարին
Դո՞ւ ես պահել քո սըրտում…

Էս սարի տա՞կ, լերան կըրծքի՞ն
Եարըս ընկաւ գընդակից,
Թէ՞ ծաղկանց մէջ, առւի ափին
Ընկաւ անգութ ձեռքերից…

Ծըրջիր քամի՛, դո՛ւ կիմանաս․
Ո՞ւր է պառկել իմ քաջը,
Կամ թէ ո՞րտեղ արձակեց նա
Վըշտի վերջին հառաչը․․



Ճիրմի տեղը, դո՛ւք ցոյց տուէ՛ք,
Ալ-ծաղիկներ արցունքի…
Ես լա՜մ պիտի… Ա՜խ, խըղճացէք,
Լո՛ւռ վկաներ սե՜ւ սգի…

ԱՐՏԱՇԷՍ ՂԱՐԻԲԵԱՆՑ

---

* * *

Շուրջս հանդէս է խինդ և բերկրութեան․
Հնչումէ քնար երգերի ալիք…
Սիրտս շիրիմ է միայն դառնութեան
Ուր ո՛չ ժպիտ կայ, ոչ էլ դայլայլիկ։
Եւ ինձ վաղեմի ցնորքիս թեւեր
Տանում են հեռո՜ւ, հեռո՜ւ հանդիսից,
Ուր ոչ երգեր կան, ոչ փայլուն ջահեր,
Իշխում են անձայն վիշտն ու թախիծ։
Ուր հորիզոնում կապոյտ լեռների
Մի նոր շաւիղ է գալարուած վազում,
Ուր դեռ փոխարէն պաղ աղբիւրների
Անմեղ արիւնն է թշուառ հոսում։
Ուր հնչում է և իմ հիւանդ սրտում
Կեանքից հալածուած ձայնը ոխերիմ․
Եւ թռչում իմ ես մութ անապատում
Չեմ գտնում դարձեալ ոչ մի մտերիմ։
Շուրջս հանդէս է խինդ և բերկրութեան․
Հնչումէ քնար երգերի ալիք․․
Սիրտս շիրիմ է միայն դառնութեան,
Ուր ո՛չ ժպիտ կայ ոչ էլ դայլայլիկ…

Շուլաւէր — ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

---

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆ

# ԷԼ ԻՆՉ ԵՐԳԵՄ

Գոռում է երկինք, զարթում են ամպեր,
Սուլում են հովեր աստղեր երգում են,
Որոտում են՝ խոր ծովերն մահաբեր,
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Ոլորտի խորքից երգում է արծիւ,
Հոյլ թռչունների դայլայլում են Սէր
Օդը լցւում է երգերով ծի՛ւ, ծի՛ւ.
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Երկրի լեռներից Երգ լսում եմ ես,
Անհունին բամբիռն՝ են իմ հոգու նման,
Դեռ անոնց կատարք երգում են այնպէս
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Ես թաւուտներից անցել եմ լռիկ,
Ինչո՞ւ—հարցրէք դուք տղա՛ք ինձանից,
— Ա՛հ երգում էին ծաղրելով մըրրիկ՝
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Մօտեցնում են զիս կողքին լճերի,
Ու ինձ ասում են «երգէ՛ պօէտ նոր.»
Լճերի երգից—Ապշում եմ, անդրի՛...
Է՛լ ես ի՞նչ երգեմ...

Բարձրացնում են զիս Մասիսի կատար,
— Ինձանից խնդրում են երգեր անհուն,
Մինչ ողբերգում էր Մասիսը կիթառ
Է՛լ ես ի՞նչ երգեմ...



Բարեկամներից առաջնորդւում եմ,
Սանկարի՝ ահեղ ջրերի կողքին
«Երգէ՛» ասում են—Գետն երգում էր վսեմ,
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Երբ խոկում էի մի բլրի վերև,
Մտերիմս խնդրում էր նըրանից երգ,
Մինչ նուագում էին աշխարհ ու արև.
Է՛լ ես ի՛նչ երգեմ։

Երգէ հրդեհն, էդ հրաբուխն՝ հրաշալիք
— Մի անռելի խոր քերթուած է այն...
Երգում է ադէտքն, ծաղրում է ալիք,
Է՛լ ես ի՞նչ երգեմ...

Ա՛հ սիրտս երազում հորի խորքը՝ մի գիշեր,
Սա՛ երկնքի բիւր հրավառ աստղերին,
«Երգէ» ասում են—ու՝երգում են «իմ Սէր»
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Ես բնութեան խորքում ծափ զարնում էի,
Երբ ասում էր ինձ բընութիւն «երգէ՛»
Մինչ ինք հազարան բուլբուլն էր Զրոյցի.
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

Երգում էր երկիր, նուագում էր Երկինք,
Դաշնակում էր Սէր, ողբերգում էր բու,
Քնարերգում Աշխարհ, նիւթն երգում էր ինք,
Է՛լ ես ի՞նչ երգեմ։

## ԻՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔՍ

Մատեան մ'ունիմ, զոր թղթատեմ ամէն օր
Ինծի համար մեծ գանձ մ'է այն անմրոր,
Հարստութիւն մ'է այն խոկի բազմերանգ,
Ոսկեվէտաս է, ներշնչման ծովս, Դրասանգ·
Անհունութիւնս է այդ գիրքը՝ բազմաթերթ,
Նուագարան է այն հոգիս յուզող մերթ·

Թանգարան մ'է հրաշակերտի անսպառ,
Անյատակ վիհ մը աստղերով լի ու վառ,
Պայծառութի՛ւնը բուն կեանքի զոր փնտռենք,
Անտառներու լռութեան մէջ՝ անդուլ մենք,
Գարուն մ'անվերջ, երգով զեղուն ու կանանչ,
Եդեմի նկա՛րը կենդանի խսկասքանչ,
Անեզրութի՛ւնը յոյսերու ծիածան,
Նորագոյն պսակը հանճարին պաշտող զԱյն։

Քնարերգութիւնն է այն Սիրտին խորանդունդ,
Երա՛զ մ'անհուն սփոփող Շիրիմն ու անդունդ,
Ոսկեվէտա մը՝ զոր հեգէ մարդը լուռ ու մուռ,
Թաղուի անոր ալքերուն մէջ մռա՛յլ՝ լուռ,
Ուր՝ Անցեալը Ուրուական մ'է մոռցուած·
Ղեկ մ'է Ս·Գիրքս—Տիեզերքն է այն կամ Աստուած։

## ՅԻՇԱՏԱԿԸ

Անհունին ձա՛յնը կը լսեմ ամպերէն,
Ջէ՛, չեմ գիտեր, այլ Սիրտս խօսի լռութեան ծոց,
Աստղերու ձա՛յնըն է արդեօք զոր ինծ բերեն,
— Յիշատա՛կ մ'է այն հրաբոց։

Գեշերն լուին է սև Քընար թռթռուն,
Նուագ մ'ունի աստղերն նետող վշտի ծոց
Ցունց տայ սըրտիս որ դաշնակ մ'է վիշտերուն
— Յիշատակ մ'է այն հրաբոց։



Բիւզանդիոնի Սիրտն անգամ լուռ՝ վաղեմի
Անապատի խաւարին պէս ծածկէ բոց,
Ա՜հ, ի՞նչ է այն, կըրկներևո՞յթ Եդեմի,
— Յիշատակ մ'է այն հրաբոց։

Հոգիս Աշխարհ գրկախառնուին սո՜ւրբ սէրով,
Մրմունջ մ'ունին արցունքի պէս ծածկող բոց,
Ա՜հ, ի՞նչ է այն, հրեշտակի Ե՞րգ անխըռով,
— Յիշատակ մ'է այն հրաբոց։

Լոյս վարդերով, ծաղիկներով զարդարուած,
Լոյս պուրակով, թռչուններով երգ ու բոց,
Դրա՞խտ մ'անեզր՝ տեսնամ ա՛հ ի՞նչ է Աստուած.
— Յիշատա՜կ մ'է այն հրաբոց։

Ռնութիւնը՝ այդ դամբարան Աստուծոյ,
Յղերգ մ'ունի սառեցնող աստղն ու հնոց,
Ա՜հ, ի՛նչ է այն-հրաշալիք բըածոյ,
— Յիշատա՜կ մ'է այն հրաբոց։

Յիշակերտ մը ովկէանին չափ վըսեմ,
Ցըցուի իմ դէմ հրաշանամ սիրտս բիւր խոց,
Ա՜հ, ի՞նչ է այն-Երազա՞նք մը խոկի վսեմ,
— Յիշատա՜կ մ'է այն հրաբոց։

Լիճի մը վրայ սևեռեցի աչքերս իմ,
Կապո՜յտ էր այն, անհունին պէս ժայթքէր բոց,
Ա՜հ, ի՞նչ էր այն-Ոգի՞, Տաճա՞ր թէ Շիրի՞մ.
— Յիշատակ մ'էր այն հրաբոց։

Մեղրածորան քնարերգութիւն մը լըսեմ,
Մթութեան մէջ՝ ուր պօէտի սիրտն՝ է քնար բոց
Ա՜հ, ի՞նչ է այն-երկնային նուա՞գ մը վըսեմ,
— Յիշատակ մ'է այն հրաբոց։

Ծովը առջևս, Երկինք գլխուս ծափ զարնեն,
Մի՛ն կ'որոտայ, մի՛ն կը գոռայ բնութեան ծոց,
Ա՜հ ի՞նչ է այն-հրաշակե՞րտ լուսեղէն·
Յիշատակ մ'է այն հրաբոց:

Ծաղիկներու բոյրերէն քաղցր մի բոյր,
Զգայ հոգիս, գինովնայ սիրտս ալեկոծ,
Ա՜հ ի՞նչ է այն-փոթորիկ մը մահաթոյր,
— Յիշատակ մ'է այն հրաբոց:

Անցա՜ւ գարուն Անցա՜ւ ամառն շունչի պէս.
Ինչո՞ւ կ'անցնին ու կը թաղուին հողին ծոց,
Ինչ որ կ'անցի պիտի ըսեմ միշտ այսպէս,
— Յիշատակ մ'է այն հրաբոց:

Երանութեանց հին կայաններն երազուն,
Զիս կը թողեն՝ լուծեն հոգիս, արտօսր լոյծ,
Ա՜հ ի՞նչ է այն-Այլակերպումն յոյսերուն,
— Յիշատակ մ'է այն հրաբոց:

Մեր հոգիին թաւալին խորն բիւր յոյզեր,
Յոյզե՜ր, յոյզե՜ր... որոնք կ'ապրին չեն մեռնիր.
Տիեզերքին հետ պիտի ապրին իբրև Տէր,
Զի Յիշատա՜կն պսակն է իր:

---

Լ Ս Ի Ա Տ Ե Ս Ի Ն

## Ե Ր Գ Ը

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար,
Զիկայ հոն վիշտ կոչուած փուշը ցից, դաժան,
Քաղցրութիւններն կըզգայ անոր բիրտ խուժան,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար,
Ուր՝ խոխոջեն բիւր առուակներ մեղանուշ,
Ալեակ, թռչնակ պարեն. երգեն հեշտ ն'անուշ,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:



Կեանքն՝ է անհուն դալարիք մը ինծ համար.
Հածոյք, բերկրանք ծովերու պէս հոգեզմայլ.
Անկից կ'անցնին ուռոգեն Սիրտս իմ դարձեալ,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար.
Ուր՝ Արեգակն՝ կեանքի ոգին փողփողի,
Թաւուտներու կանանչ ծոցէն պէս ուղխի,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար.
Ուր՝ Գիշերներն են լուսնի գահն երբենեայ,
Աստղերն՝ Սի՛րտ մ'են հածոյքով լի՝ որ պլպլայ.
Կապոյն Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար
Ուր՝ բնութիւնն՝ սփռէ ժպիտ՝ անմռունչ,
Իբր հրեշտակ մը լուսաթեւ երգի փունջ,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար,
Վիշտը՝ պատրանք, լացը՝ ծիծաղ հոգեյոյզ
Նոճին՝ դաքնի, արցունքն՝ գոհար մեր միակ յոյս.
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն դալարիք մը ինծ համար,
Իսկ բնութիւն Աստուծոյ ժպիտն այն անհուն,
Մարդուն հոգին բնութեան ծիծաղն պէս ծովուն,
Կապոյտ Երկինք մ'ունի Սէրն հոն՝ իբր կամար:

Կեանքն է անհուն խրախարան ինծ համար,
Տիեզերքը հածոյքի երգ՝ զօր՝ երգեմ,
Զիկայ հոն լաց, այլ բերկրութիւն մահուան դէմ,
Կապոյտ Երկինք էր իմ հոգիս՝ վե՜հ կամար:

---

## ՎԱՅՐԵՆԻՆ

Տարէ՛ք զիս հոն՝ ուր ստուերները կ'երազեն,
Լուռ ն'աստղազարդ քնարին տակ մահերգակ,
Ես կը պաշտեմ Նուագարաններն, աստղս կրակ,
— Վայրենիին աստուածութի՛ւնն են անզէն։

Անտառներու զմրուխտ ու կոյս քողերն այն,
Սարսուռ կըզգան ոտքերուս տակ ու կ'ըսեմ,
«Այս զմրուխտէ կամարներն՝ երգ մ'են վըսեմ,
«Վայրենութեան ծոցէն թըռած՝ ուրուական։

Ապառաժնե՛ր, ապառաժնե՛ր դալաւոր,
Դո՛ւք էք Անցեալն, դո՛ւք էք շիրիմն դարերուն,
Դո՛ւք էք Մահիճն վայրենիին ձմեռ՝ գարուն,
Դո՛ւք էք Արցունքն հին՝ մարդկութեան հուսկ մրուր։

Խոր ծերպերէն կը նետուի դուրս վայրենին,
Դժոխքէն փախած ստուերի նման քստմնելի,
Գիշերն անգամ դողայ անկէց ու հալի...
Կը մըռընչէ դարձած դո՜խքն այն վայրին։

Հմայիչ է լեռն իր սարերով ամպածրար,
Հմայիչ է գետն գոհարներով ոսկեփայլ,
Կանանչութիւնն թագաւորէ անայլայլ,
Վայրենիին ցոլացնեն կեանքն զերդ կամար,

Գլուխն՝ մացառ մըն է ինքնին մռայլամած,
Դէմքը՝ դանդիռ, մարմինն՝ կոճղ մը մամռապատ.
Աչքերն՝ փարո՛ս են անտառին զոյգ հըրատ,
Բնութիւն հոն՝ կուրուագծուի իբր Աստուած։

Տերևներուն ու ջուրերուն մէջ բիւրեղ,
Ցաղթ լեռներուն, քարայրներուն մէջ մթին,
Ծովու երկնին, ծխածանին ու մութին,
Խորքը տեսնայ Ոգի մը լուռ՝ թանկ բիւրեղ,



Հողմերուն հետ կը խօսի այն պոռալով,
Կանչէ զանոնք, իբր ոգիներ օդապատ
Ընդոստ կելնէ ու կորոտայ սիգապար,
Շանթին՝ ն'ամպին դէմ խռով։

Բնութիւնը Ոգիներու Տաճար մ'է,
Անոր մտքին խօլ հայթքումնե՛րը գրգռող,
Իր հոգին ալ կղարթ մը միայն՝ կեանքի քող,
Բոլոր կեանքը կարծե՛ս շորթէ Աստուծմէ։

Անտառներուն, ստուերներուն հետ խառնուի,
Ինքն ալ անսառ ու ստուեր է անթափանց,
Իր բնակարանն է բնութիւնն՝ Սիրոյ գանձ,
Իր դաւանանքն են Ոգիներն պէս ուրուի։

Սիրտ մ'ունի այն Տիեզերքին հայելի,
Ցափշտակութեան համար ստեղծուած թատր մ'է
Խաւարակուռ անուրջներու ովկիան, (այն,
Բիրտ վայրենին բնութեան վրայ կը զմայլի,

Վայրենիին համար շիւղն իսկ է Աստուած,
Չիլէն անգամ զաղտնիք մ'ունի դեռ անյայտ,
Թռչուններու այդ սէգ որդին՝ ճառագայթ
Մ'ունի սրտին աչքերուն մէջ անկասկած։

Լեռն ու ժայռերն, անտառն հսկայ ծառերով,
Որոնց ծոցէն գըլգըլալով կը վազեն,
Սառն ու փրփրուն ջուրեր անդուլ պարզ՝ լոյսէն.
Վայրենին հոն՝ կը գինովնայ դառնայ ծով։

Գաղտնիքն է այն անտառներու մէջ ձգուած,
Խաւա՛րն է այն աստղի կուրծքէն քամուած վար,
Կիրթ մարդկութեան արմատն է այն մթավառ,
Քաղաքակըրթութեան Երկունքն է այն ինքնարծարծ։

Լուսնակին լոյսն, դաշտի կանաչն լայնատար,
Թռչուններու, գետակներու կախարդանք,
Չի՛ փոխեր ան պալատներուն հետ՝ զերդ կեանք,
Անասուն մ'է, բնութեան կոյր ցուլքն կամ աշխարհ։

Վարենիին ճակտէն կարդամ գաղտնիքներ,
Մեհենադրոշմն է բնութեան սէգ բուրգին
Կը կարդամ զայն ու հասկնամ մարդն խնդագին,
Պատմութի՜ւն մ'է խորհրդաւոր՝ զերդ հեթեր։

Վայրենին չէ՛ օտար էակ մը մենէ,
Անտառներու եզերք պառկած հրէշն այդ.
Երկնքի չափ լոյսեր ունի, ճառագայթ,
Անցեալն՝ ներկան զօդող կրար՝ որ քուն է...

Ես կարտասուեմ մայրիներուն տակ անձայն
Չէք մարդկութեան յետամնաց ճիւղին վրան,
Որ կը հաւատայ թէ Տիեզերքն է վրան.
Անտառը՝ ողբս, ջուրերն՝ արցունքս կը դառնան։

Տարէ՛ք զիս հոն ուր ստուերներն կերազեն,
Լուռ ու'աստղազարդ քնարին տակ մահերգակ,
Ես կը պաշտեմ նուագարաններն աստղ ու կրակ։
— Վայրենիին աստուածութիւնն են արդէն։

---

## ՋԳԱՑՈՒՄՆԵՐ

Կեանքի տաճարը բնութիւն կենդանի,
Խանձարուրէ մեղամաղձիկ **Սիրտս՝ Հոգիս**,
Արցունքներու Ա՜ղբիւրն է Եսը հէգիս,
Այդ աղբիւրէն խմեմ իբրև կենդանի։

Ի՞նչ է Մարդը՝ թէ ոչ խորհող կենդանի,
«**Մարդ**» յորջորջուի, զի վիշտերու կո՜յտ մ'է ան,
Տառապանքի ցօղեր կաթեն աչերն միայն,
Ա՜հ այն աչերն լի՜ն են ցօղի այնքանի՜...

Թըշուառներու է ըմպելին դառն արցունք,
Բնակարան՝ է Գերեզմանն մահաշուք
Խորհրդանշանն՝ է Սև Նոճին մահու շուք,...
Աղօթքն՝ է Ողբն ցնցող երկնի վեհ բարձունք։



Սարսափիդ մէջ ձուլուած են մեր ոսկորներ,
Իսկ մեր միսերն՝ վիշտերու մէջ խմորուած,
Փոթորիկի համար ծնած ենք տխրամած,
Բնութեան օրէ՞նք է **Վիշտն**, քանդա՛կն ոսկրին մեր։

---

## ՈՍՓՈՐԸ

Անհունութիւն մը կը փրփրի ոտքիս տակ,
Ցափշտակուած փրփրի հոգիս անյատակ,
Բոլո՛ր վիշտերս, բոլո՛ր երգերս մեղանոյշ,
Վոսփորին հետ կալեծըփին վառ ու'անոյշ,

Կը տարածուի, կը ծաւալի, ծալլուի,
Անե՜զր սընդուս հիւսուած ծիրքէ մ'ահռելի,
Վարագոյր մ'է՝ ուր Դրախտներ պարզուին,
Մէն մի կոհակ հրաշակերտ մ'է իմ աչքին։

Ապարաններն հրաշազան ծաղկներով,
Վոսփորի գի՛րկը միշտ լեցուին անխըռով,
Պատկե՜ր մ'է այն բնութիւն-նկարչէն գծուած հոն,
Ցափշտակուիմ... սուզի հոգիս խորն ծովուն։

Վոսփո՜ր, Աստղի՜կն ես ծովերուն աշխարհի,
Դու Եւրոպան ու'Ասիան՝ որ աշխարհի...
Կը կախարդես, կախարդութի՜ւն ջուրերու,
Անհուն բաժա՛կ՝ զոր Սիրտս քամեց համբարո՛ւ։

Դո՛ւ Ամազոնն ես հմայիչ, սիրազեղ.
Իշխանուհի՛ս ալիքներու լո՜յծ՝ բիւրեղ
Անդրին ես դու գեղեցկութեան բնութեան,
Նկարիչ՝ Պօէտ պաշտեն զքեզ, կո՛յս վեստեան,

Ո՞վ չի սիրեր զքեզ **Վոսփո՛ր** հրաշագեղ,
Դու չե՞ս քնարն բանաստեղծին՝ որ աղեղ
Քաշէ լարիդ դիւթէ երկի՛նքը համայն,
Դընէ հոգին ջուրերուդ վրայ իբր սահման.

Ո՞վ չի սիրեր քու ծըփանքներդ փրփրադէզ,
Տպազիոն, սուտակ, յասպիս կըլլան դէզ,
Բիւրեղ, մարգրիտ ըղձին ծոցէդ այդ զմրուխտ,
Սքանչացումն կուտաս մարդուն իբրև ուխտ։

Ո՞վ չի սիրեր լոյծ բուրգերն այդ շափիւղայ,
Ուր իմ սառներս հոգիիս հետ կը դողայ,
Պարուրուի հոն իմ էութիւնս բոլանդակ,
Վոսփոր մ'ըլլամ երազիս մէջ՝—մեծ կոհակ։

Ո՞վ չի սիրե՛ր Աստուածային գորգը այդ,
Որուն մէկ ծայրն բռնէ Եւրոպն փախըստեայ,
Իսկ միւս ծայրէն Ասիան՝ վեհ ալեզարդ,
Հայր և աղջիկ գիրար տեսնին անկից արդ։

Դարե՛ր, դարե՛ր Դուք ծերանաք ու մեռնիք,
Բայց չեն մեռնիր, չեն ծերանար այս ալիք,
Յաւերժական պատանիներ են անոնք,
Կը պարեն յար, ըմբշամարտին հեշտ՝ անհոգ

Երիտասարդութիւն բուրեն կոհակներ,
Մտերմանում ես անոնց հետ իբր ընկեր,
Ես միասէր կերգեմ անոնց հետ միասին,
Կերգեմ կեանքը ս'իր հանոյքներն, որ չե՛ն սին։

Դարերն կանցնին փրփուրներու ցայտման հետ,
Նո՛յն է ծովը, նո՛յն է Վոսփորն՝ արահետ,
Եւրոպէի սարսափահար փախուստին,
Արամազդի Սրտի Պատկե՛րն անդստին։

Բանաստեղծնե՛ր, նկարիչնե՛ր, հո՛ս եկէք,
Թէ՝ ներշընչուիլ կուզէք վիհէն աղէբեկ.
Թէ՝ սքանչացումն հասկնալ կուզէք իրապէս,
Վոսփորին հետ մտերմացէք ինծի պէս։

Անմահանուն Այվազովսկի չ'յափրացաւ,
Վերադարձին կըսեն թէ՝ Մարդն այդ սրարշաւ,
Գնաց եզե՛րքը Վոսփորին փրփրակուտակ,
«Ա՜հ, անգամ մ'ալ նայիմ ըսաւ ա՛ս ծովակ»։



Թագապսակ այցելունե՛րը բոլոր,
Հմայուելով ալ չե՛ն ուզեր դառնալ լուռ.
Կումա քաղքի Սիբիլլային պէս կախարդ,
Կը թովես դուն, Վոսփոր կապոյտ, ժայռն ու մարդ։

Սիրտէն զգայուն ի՞նչ ունի մարդն կուրծքին տակ,
Անկէ ժայթքեն բիւր աշխարհներ անյատակ,
Հանճար, տաղանդ ա՛ն կըստեղծէ ի՞նչ ըսեն,
Այլ Վոսփո՞րը—անոր քնա՛րն է վըսեմ։

Վայրագ, ցրտին իրապաշտն իսկ կը մոռնայ,
Իր սկզբունքն ու վերանայ մինչ Սինայ
Լեռ չի մնար, որ չի թռչի միտքն անոր,
Աստղ չի մնար, որ չի ժողվէ երկնէն հուր։

Քերթողներու ընդդիմամարտ գիտուններ,
Ի՞նչ բարբանջէք, ինչ զառանցէք գլխուն մեր,
Վոսփորն ձեզի կը բաւէ տալ պատասխան,
Ձեր ձեռքը չէ՛ չի հմայւիլ անձնիշխա՛ն։

Վոսփորն բո՜վ մ'է զգացումներու դեռ դալար,
Երկնի ամպերն, երկրի սիրտերն փափկալար,
Քու մէջ ցոլան ու պսպղան անդադար,
Երգի փոխուին դիւթանք թափեն սիրավառ։

Կեանքն է Վոսփորն հանոյքներու թագուհի,
Կը փոթորկի. այլ շատ չանցնիր կը ժպտի,
Նաւերուն հետ կատակ կընէ ամեն օր,
Չի յափրանար զբօսանքէ լուրթ Վոսփոր։

Իլեքտրական աճարկու շի՞շ մ'ես Լէյտեան,
Որ դողացնես ջիղերս՝ հոգիս յաւիտեան,
Սիրտս այդ շիշին մէջ կաթկըթի շիթ առ շիթ,
Հոգիս յուզուած ելնէ մարմնէս քով նհանգիդ։

Սիրտս կ'որոտայ դարձած մըրրիկ ովկիանի,
«Ա՛յս է իմ քնարս չե՜մ հեռանար, պատանի,
«Ա՛յս է իմ ուղխըս արցունքի կաթնաթոյր
«Ա՛յս է իմ աչքս տեսնող լուրթ երկնի դուռ»։

Հոգիս դարձած ալկիոն մը ջրասէր,
Երգէ, «Վոսփոր դու ես դրախտս լիցուած Սէր,
«Ջեմ հեռանար այդ ափերէդ դրախտային,
«Ուր՝ աստղերը ոսկի ճաճանչ տեղային»:

Այս խօսքերէն գալարեցաւ Մեծ ծաւին,
կուրծքը ուռիլ էր սկսած հետ ցաւին,
Երկինք գծուած էր յատակը ջինջ՝ զերդ շող,
Ցիմարի նման սկսաւ ափին նետել ալիք:

Ես լսեցի ձայն մը շրթնէն Վոսփորի,
Երազ չէր այն, քնարերգ մը որ փրփրի,
Ցայտնութիւն մը կապոյտին մէջ երկնուած,
«Գեղեցկութեան Ոգին եմ ես» ըսաւ ցած:

---

## ՋԱՆՁՐՈՅԹԸ

Փչեն հովե՛րը ցուրտ Աշնան իմ գլխուս,
Մթնոլորտը սարսուռներով կը լեցուի,
Երկրագունտը կը սարսռի՛ տալով խոյս·
Արեգակին ճաճանչներէն բոցաչուի,
Սիպերիոյ սառամանիք կը պատեն,
Ո՜հ, իմ չորս կողմս, ուր՝ ժայռ մը կայ մի՛ծ պատէն
Ժայռ մը՝ անհուն վիշտերու ծոյլ սև պատկեր,
Մամուռ՝ բաղեղ կը գըրկեն զայն լռութեան մէջ.
Բնութիւնն անգամ սոսկայ անկէց մինչև վերջ,
Ջանձրո՛յթն էր այն, հուսկ հառաչանքս, որ ժայթ-
(քէր·
Ես գիշերի սարսուռն ունիմ ճակտիս տակ,
Ես անդունդի սարսափն ունիմ ձեռքիս մէջ,
Տեղատարափ վիշտերն փորեն մի գետակ,
Ուրկից հոսեն իմ երազներս՝ Սէ՛ր՝ անշէջ·
Մոխիր դառնան. մոխիր դառնամ, ի՛նչ ընեմ,
Երբ պարեխ մը, տեսնեմ հեռո՛ւն, յոյսիս դէմ,



Ծունկի վրայ գալով կուլամ անոր մօտ,
Ուր հրէշներու կը լսեմ հաչիւնն մահագոյժ
Մտածումնե՛րն են ժանտ կեանքին համակ փուշ,
Ջանձրոյթի ստուերն էին անոնք սառն՝ աղօտ:

Ես ինքզինքս յար նոճիներու շուք կարծեմ,
Ու կը փարիմ տապանի մը մշտական,
Հոն քնանամ ես, բայց կ՚արթըննամ առտուան
Երազ մ՚էր ան, սրտիս մահը մութ՝ խոկան։ (դէմ,
Թափէ՛ Աշունն իր արցունքները դաշտէն,
Ջոր թշուառնե՛րը յուսահատ կը պաշտեն,
Խարակ մը չէկ, վշտի վկայ մը կանգուն,
Մահու դըժխեմ ճառագայթումն եմ այլ ևս,
Ես չեմ յիշեր կեանքի համբոյրն շրթներէս,
Ջանձրացած եմ, լամ, սոխակի մը հանգոյն:

Կը մարմըրիմ, ծիւրիմ ծընգիմ տենչերէս,
Յիշատակներս Վոսփորին պէս կապուտակ,
Վոսփորին պէս կը փըրփըրին, Սի՛րտ Արէս,
Պատերազմէ՛ դու անոնց դէմ զերդ հրեշտակ,
Ճակատամարտ կը մղեն Սիրտս ու հոգիս.
Պատերազմի դա՛շտ մ՚է Մարմինս սիրահիւս·
Եւրոպայի բոլոր զէնքերն նորահնար,
Ջունին հոգւոյս զօրութիւնը միշտ անյաղթ:
Երկինքն ւ՚երկիրն են ամրոցներն իրեն գաղտ,
Եղո՛ւկ, Ջանձրոյթն կրծէ իմ կեանքս ու քնար:

Ես ուզեցի հանել հըռչակ քերթողի,
Բնութիւնը՝ քերթողահայր անուանել,
Աւա՜ղ, իմ շուրջս տեսայ լռութի՛ւն, ու ղօղի,
Շուա՜յտ աշխարհն խնէշութեամբն իրանել,
Ի՛հ, անտարբեր հոգիներէն հարուածուած,
Ինծի համար գրեմ միայն, ես Աստուած,
Սիրտս թռչնիկ մ՚է պուրակի սիրահար,
Սաղարթներէ սաղարթ սլանայ ու երգէ,
Գըլգըլացող առուակներէն, Սիրտն կրակ է
Մուր է իր հուրքն՝ ու ծանձրանայ իբր թշուառ··

Բախտի անո՛ւնը երբ լսեմ կը դողամ,
Ու մըրմընջեմ խաւարամիտ մարդու պէս,
«Ճակտիս վրայ տարտարոս մը՝ Սև՜ խրամ,
«Գծուած՝ փորած է կո՜յր բախտը ճամակ ծէս»,
Ես աշնահար տերևի պէս թռչըտիմ,
Ոլորտին մէջ, ուր փոթորիկն ոխերիմ,
Կը մըռընչէ առիւծի պէս օդապար
Քամին լերան ծիւնախաղաղ կատարէն,
Իբր կիկլոպայ վար վազէ՝ ուր կատարեն,
Բնութեան յուղարկն՝ եղանակներն տրտմաբար:
Ո՜հ, Ձանձրութիւն կեանքի՝ ժանտ խժն սողոսկի,
Նրակներուս արեան միջէն կենսունակ,
Բևեռային ովկէանոսն՝ վիճն սուգի,
Գոգցե՛ս ռունայ հոգիիս մէջ վիշտ ճամակ.
Տիեզերքը սև հիւղրայի մը նման,
Շաղապատի ու գալարի ճակտիս վրան,
Ամէն ճաճոյք՝ արցունքի ակ կը դառնայ,
Ամէն իղձեր՝ գիշեր դառնան անյատակ,
Ամէն երգեր՝ ճառաչ դառնան՝ մտքիս տակ.
Նրբ ձանձրանամ կեանք հուրիէն մշտակայ,

Շօբէնհաուրի ո՛իր աշակերտն հայթման(ի),
Սէգ Պիւխնէրի ու Պայրընի չափ սև՜ տեսնեմ,
Այս աշխարհը, այս կրօնը, որ մեռնի՜...
Շէյքսպիրի ու Պայրընի հետ վըսեմ,
Գրեմ բնութեան ճակտին վրայ աստղազարդ,
To be or not to be ու կ՚արտասուեմ իբրև մարդ.
Ա՜հ այն ատեն է որ սուզիմ խոկերով,
Ձանձրոյթ կոչուած ծովուն ալքերը ժայռուտ
Հոն կը կանչեմ ես Աստուծոյ եւ Ձանձրոյթ...
Ու կը թաղուիմ փոսի մը մէջ անգորով:

---



Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՀԸ

Պէ՛տք է մեծ լե՛ռը կործանի,
Պէ՛տք է հաստատ գերանն ինք_
(նին բեկանի,
Իմաստունը բոյսի մը պէս կ՚ան_
(հետի

Կոնֆուցիոս

ՔՆԱՐԱՆ

Ո՛վ ալեզարդ Նիրհուն քերթող ու Գիտուն,
Զարկաւ քեզ Մահն, բացաւ քեզի գերեզման...
Ըրաւ Տիեզերքն անխօս կոթող մահատուն,
— Լո՛ւռ է մեր հայրն Ալիշան:

Աշխարհն մ՚էր ան գաղափարի երփներանգ
Փլա՜ւ... ինկաւ ա՛յս փոսին մէջ աննշան,
Կտակելով փառքն իբր յիշատակ, դրասանգ.
— Մեր փառքն է հայրն Ալիշան:

Քնարի լարերն այժմ ջախջախուած ու լռին
Քերթողի սուտերն նոճիներէն սգանման,
Աստղերու Քնարն թո՛ղ սփոփէ պուէտն այն Բարին,
— Մեր փառքն է հայրն Ալիշան:

Սգաւոր Քնարն ցուրտ պատանքի մէջ լռեց,
Սո՛ւգ է մեր սիրտն, զի տարաւ Մահն մարդ մ՚ան_
(նըման,
Զգացումներու հրաշակերտումն էր Սիրտն մեծ.
— Մեր սուգ քնարն էր Ալիշան:

Աշխարհն բարի բոլոր Ներկերն Բնաշխարհիկ,
Կը փողփողեն իր գիրքերէն Բուրկէնեան,
Նարեկացին եղաւ լեզուին—աշխարհիկ.
— Իսկատիպ մ՚էր Ալիշան:

Գեղապաշտի սիրտն զինքն յուզեց բնութեան մէջ։
Ռըսքինի աչքն ունէր գրիչն քննական,
Կեանքի բոլոր երեւոյթներն գտնէր պերճ.
— Մեր դիտողն էր Ալիշան։

Վենետիկի ալէծածան դիւթանքին,
Երգի հանքն էր այդ հազմերգուն հին Գողթան,
Ծո՜վ մ'էր խոկի մշտատատան ահագին,
— Մեր խորհողն էր Ալիշան։

Մխիթարեանց լոկ փառքն չէր ան, այլ ամէնուս,
Գոյժը լացուց հին սգաւոր Մասիսն այն.
Լացին գետերն՝ Եփրատ, Տիգրիս ա՛լ անյոյս…
— Մեր սոխակն էր Ալիշան։

«Հին Հաւատք»ի խորքը սուզուած վսեմ մարդ,
Անտառներէն մեհեան ինչաւ, գրեց ան,
Բագիններէն մտաւ–ցանարն մահազարդ,
— Կրօնագէտ մ'էր Ալիշան։

«Հայ Բուսակ» սքեմաւոր Լիննէոս,
Սքեմին մէջ քննեց բոյսն իսկ անանշան,
Ա՛լ չի տեսներ… հողին ներքեւ մահահոս.
— Բուսաբան մ'էր Ալիշան։

«Սիսուան» հսկայ հատորներուն հեղինակ,
Տանն Սիւնեաց մեծ պատմիչ քան զՕուրպէլեան,
Աշխարհագրի, պատմաբանի մի՛տք անյագ.
— Մեր Միշլէն էր Ալիշան։

«Նուագներու» մեղրալեզու քնարերգակ.
«Յուշիկներու» արձակագիր Եղիշեան,
Եփրատ մ'զգացում երգի փոխուին հրակայլակ
— Մեր իրագէտն էր Ալիշան։

Ինն մուսայք–աստուածացո՛ւմը միտքի.
Քե՛զ ծնելու իրենց արտօսրն գալով լան,
Բեղմնաւոր մի՛տք ինն մուսայից կաթն ըմպած,
— Համայնագէտ մ'էր Ալիշան։



Քու հանճարիդ եղան աղբիւր տիեզերք,
Գերեզմանաց Տեսուչ լուսնակդ գայ քնարան,
Զքեզ կ'ո՛ղբայ գիշերուան մէջ վհիդ եզերք։
— Գրկէ՜ անհունն Ալիշան։

դեկտ. 1. 1901

---

ՄԻՀՐԱՆ ԹԱՊԱԳԵԱՆԷ

## ԱՆՑԵԱԼԻՆ…

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջեւ,
Ուր ժողովուրդ մը անխնէն կը խօսի,
Իր բովանդակ վիշտերուն մէջ քաօսի,
Արցունքներու անհեղ ծովէն հեւ ի հեւ…

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջեւ
Ուրուականի բընակարան ժայռերէն,
Մամուռի նման կառչեն սիրտերն հրեղէն,
Ա՛հ, կ'արտասուեն… փառք դափնին այն անտերեւ…

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջեւ,
Ա՛հ, հոն հոգին՝ թէ շունչ մ'է սեւ պէս ծուխի,
Թէ հրեշտակ մը թեւերով լուսածղի,
Դիակ դառնայ… յ'անհին մազերն լեր արեւ։

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջեւ,
Զգացումներն սրտի դաշտին պուրակներ,
Է՛… տաշտախիլ կ'ընէ Սարսափն մահաբեր,
Ժայթքի մոխիրն մոխիրներով հուր թեթեւ.

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջեւ,
Եռուզեռ կեանքն ըլլակ դարձած ոսկրալից,
Անեղ հառաչ մը գրկէ զայնս իբրեւ բիծ,
Սարսուռը հոն՝ գիշեր ծնի մշտատեւ։

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջև
Ուր լռած են խրախարաններ, թատրոններ,
Ո՛հ, ո՛չ ևս են գեղուհիներն սիրաբեր,
Մեռելութիւնն է թագուհի արդարև...

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջև,
Նինուէական, Բաբելական, Նռասխեան,
Հիթեթական, Եգիպտական, Յունական,
Այս ստուերներն դեռ կ'արտասուեն, վկայ արև...։

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջև,
Ո՞վ չի խորհիր թէ Տիեզերքն բովանդակ,
Աւերակ մը.... յոգնատխուր մռայլի տակ
Պիտի հեծէ... սրտի մը պէս իմ վերև...։

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջև,
Գերազանցող այս ամէնը՝ որ կու լան,
Սիրոյ Անցեալս է այդ աւերն մռա՜յլ... լա՜յն.
Սիրտս՝ գերեզման, հոգիս՝ խորան դրախտի ձև։

Ո՞վ չի խորհիր աւերակի մը առջև
Գերազանցող տիեզերքն իսկ այս անհուն...
Անցեալ մ'է այն, Սիրոյ ովկեան՝ հոգւոյս Տօն.
Ա՜խ, յորդած է... սրտիս խորքը... լա՛մ կեանքս
(սև...

---

## ԿԱՐՕՏԸ

Եթէ տեսնէք մի հրդեհ,
Մեծ քաղաքներ աւերող,
Թէ արցունք՝ վիշտ անընսեհ
Թըրջեն մոխիրն ու սև՛ հող,
— Պատկե՛րն է այն կարօտիս։



Եթէ տեսնէք մի կայծակ,
Ճեղքող ժայռերն երկնաբերձ,
Եթէ գըտնէք սանձարձակ,
Արհաւիրքներն, սարսափ մեծ,
— Պատկե՛րն է այն կարօտիս։

Եթէ տեսնէք մի վարսամ
Բիւեռներէն քերող շուտ
Դողացնող կեանքն՝ ուր յուսամ
Գոչէ ռամիկ՝ «Մա՜հ մ'անսուտ»։
— Պատկե՛րն է այն կարօտիս։

Եթէ տեսնէք մի հրաբուխ,
Անեղ լեռնէ դուրս ժայթքող,
Թ'աւերէ դաշտ մը անկոխ,
Քաղաքներու տայ սև քող,
— Պատկե՛րն է այն կարօտիս։

Եթէ տեսնէք մի գիշեր,
Դժոխքի պէս սգաւոր,
Ուր լռութիւն իսկ՝ չի յիշեր,
Երկնակամարն իբր սև հոր.
— Պատկե՛րն է այն կարօտիս։

Եթէ տեսնէք մի ովկեան,
Փոթորիկի բըռնըւած,
Սարսող սիրտեր՝ բի՛ւր, ա՛յնքան,
Մահեր գուժող անկասկած,
— Պատկերն է այն կարօտիս։

Եթէ տեսնէք մի արցունք,
Շիրմի մը վրայ թողուած վառ
Սիրահարի մ'ինկած ծունկ
Յիշատակի մը համար.
— Պատկե՛րն է այն կարօտիս։

---

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆՑ

## ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՌՈՒՄ

Անխօս ու լռիկ պըտոյտ իմ գալիս
Ես Դիլիջանի կանաչ անտառում.
Թարմ օդն ինձ այստեղ նոր կեանք է տալիս
Եւ անուշ ցընորք հոգիս է վառում։
Շուրջըս դիտելով, գընում եմ առաջ.
Արփին երկնքից վերաս է նայում
Թովում է ինձ պաղ առուակի կարկաչ
Եւ հարաւային հովն է փայփայում։
Ամէն ինչ այստեղ ճոխ է, գեղաշուք...
Շուրջըս՝ փառահեղ խոր խաղաղութիւն,
Հոգեզմայլ ամբրոս, կախարդիչ շըշուկ
Եւ գեղածիծաղ լեռնային բնութիւն։
Ամէն ինչ այստեղ մօտ է իմ սրտին,
Մօտ է իմ սրտին, սակայն և օտար.
Օտար են այստեղ լեռները ահագին
Ինձ, օտար վայրի զաւակիս համար։
Նըրանց մի կաթող ոյժ է ըստեղծել,
Եւ նոքա՝ հնազանդ իրենց Ստեղծողին,
Ճեղքել են ամպերն ու երկինք հասել,
Սարսափ ազդելով իրենց դիտողին։
Նեղ կիրճը հեռուն ահեղ պատերով
Մի ոլորապտիրկ զանգուած է կազմում,
Եւ նորա վերայ ազատ, անխըռով
Օդերի արքան արծիւն է բազմում։
Իսկ այնտեղ ցածում սիրո՜ւն, ծիծաղկո՜տ
Գորգերի նըման մարգեր են փռուել,
Եւ նոցա վերայ արթուն հովուի մօտ
Գառներ են խաղում ազատ, անարգել։
Ա՜հ, տրտում էք դուք սիրուն ու խաղաղ
Մայր Հայաստանի կանաչ անտառներ.
Մարդու սիրտն այստեղ չէ խնդում, աւա՜ղ,



Չեն լսվում այստեղ թռչնակի տաղեր։
Երբեմըն միայն թաւուտքի խորքից
Հանդա՜րտ, միակե՜րպ կըկուն է կանչում,
Երբեմըն միայն տըխո՜ւր. թախծալի՜ց
Մայր-հայրենիքի հովն է հառաչում...

Սեպտեմբեր 1892
Դիլիջան.

---

## ԳԱՐՈՒՆ ԵՒ ՄԱՅԻՍ

Ահա և գարնան ոսկի երազներ...
Հերիք է, որ դու թախծից տոչորուիս.
Տե՛ս, ժպտում են քեզ աստղեր ու վարդեր.
Գարուն և Մայիս...

Ամէն ինչ պայծա՛ռ նո՜ր ու զարդարո՜ւն.
Հովը քեզ անուշ ողջոյն է տալիս
Խնդա՛, նազելի, քեզ համար՝ գարուն
Քեզ համար Մայիս...

Բայց կը գայ մի օր՝ լռիկ ու տրտում
Աշնան ծաղկի պէս դու կը թառամիս.
Աղօթի՛ր որ միշտ շողան քո սրտում
Գարուն և Մայիս...

Մայիսի 14, 1895
Նոր-Նախիջևան

---

## ԿՈՏՐՈՒԱԾ ԾԱՂԿԱՆՕԹԸ

(*Սիւլլի Պրիւդոմից*)

Անօթը մեռնող աղաւնարօտով
Հովհարի անկարծ հարուածից ճեղքուեց.
Հարուածն էր դիպել հազիւ քսուելով,
Ոչ մի հնչիւնով նա չ'արտայայտուեց։

Սակայն այս թեթև ճեղքուածքն ըշտապով
Բիւրեղն ամէն օր մաշելով ազատ,
Անտեսանելի հաստատ ընթացքով
Նորա չորս կողմից անցաւ աննըկատ։

Եւ կաթ կաթ նորա թարմ ջուրը ծորաց,
Քամուեց և ծաղկի հիւթը անխընայ.
Ոչ ոք դորա վրայ էլ չունի կասկած.
Մի դըպչէք նըրան, կոտրըւած է նա։

Այդպէս սիրելի, գիրգ ձեռքը յաճախ
Քսուելով սրտին, խոցումէ նըրան,
Ջարդվում է յետոյ սիրտը ինքն իրան
Եւ թօշնում սիրոյ ծաղիկն անյապաղ։

Նա, միշտ մարդկային աչքից թաքնըւած
Ըզգում է ինչպէս խոր վէրքը վիրան
Մեծանում է շուտ և լալիս կամաց.
Կոտրըւած է նա, մի դըպչէք նըրան.

Յուլիսի 20. 1901
Նոր-Նախիջևան.

---



## ԵՍ ՁԵԶԱՆԻՑ ՀԱՑ ԽՆԴՐԵՑԻ

Ես ձեզանից հաց խընդրեցի, դուք ինձ տուիք հող
(ու քար
Ջուր խնդրեցի, դուք ցեխ ու կեղտ ինձ մատուցիք
(լըբաբար,
Ցրտութեան մէջ դողդողացի, դուք ինձ սառոյց բե-
(րեցիք,
Տաքութեան մէջ բորբոքուեցայ, կըրակի մէջ նետե-
(ցիք։
Ազատութիւն ես խնդրեցի, տըւիք բանտի մութ պա-
(տեր,
Պահանջեցի կըռիւ ու մարտ, շղթայեցիք իմ ձեռքեր.
Ուրախութիւն ես տենչացի, դուք ինձ տըւիք սուգ
(ու վիշտ,
Որ աշխարհի ճոխ խնճոյքին լինիմ անմասն ես ընդ-
(միշտ։
Ես չարիքից հեռու փախայ, իսկ դուք նըրան յա-
(րեցաք,
Ես քաջութեամբ յառաջ ընկայ, իսկ դուք յետ յետ
(քաշուեցաք.
Փոխադարձ սէր ես խնդրեցի, իսկ դուք, աւաղ, մեր-
(ժեցիք
Եւ ինձ դաժան անյուսութեան խաւարի մէջ նետե-
(ցիք։
Համբերութեան բաժակն իսպառ դատարկեցի ես
(այդպէս,
Եւ չարաչար ձեր ձեռքերից հալածուեցայ մշտա-
(պէս,
Ոյժըս կորցրի ես ձեզ համար և բըթացրի իմ զէն-
(քեր,
Բայց դէպի ձեզ չըմոռացայ ես տածելու անհուն սէր:
Ձեզ սիրեցի ես ջերմագին և անսահման այդ սիրով
Դեռ իմ դալուկ սիրտնէ վառվում, ձեզ լոյս ու
(կեանք տենչալով.

Եւ չեն յաղթի նըրան երբէք ոչ նենգաւոր չար
(ոգին,
Ո՛չ օրհասի դժնեայ խաղեր և ո՛չ արծաթն ու ոսկին։

Յունիսի 8, 1895
Սիմֆերոպոլ

---

## ԳԻՇԵՐ ԾՈՎԻ ՎԵՐԱՅ

*(իմ յուշատետրից)*

Ահա իջաւ պայծառ գիշեր, գիշեր անուշ խոհերի,
Գիշեր չքնաղ երազների և դիւթական ըղձերի.
Ծուփ ծուփ արծաթ թափեց լուսին ծովի վերայ
(երկնքից,
Եւ հանդարտիկ ննջեց աշխարհ յոգնած օրուան աղ-
(մուկից։
Չըկայ մի ձայն... շուրջըս՝ խաղաղ, միայն երբեմն
(անտարբեր
Գար են գալիս ու մեղմ ճղփում արծաթազօծ ա-
(լեակներ.
Լուռ են այնպէս ոսկի աստղեր եթերային խոր ծո-
(վում,
Եւ փառվըռուն հուր աչերով ափշած հոգիս են թո-
(վում։
Չքնա՜ղ գիշեր... ծով և երկինք, արծաթ շողեր լուս-
(նակի...
Միտքըս աննիւթ թևեր առած՝ վեր է թռչում ուղ-
(ղակի,
Թռչում դէպի կապոյտ երկինք, դէպի պայծառ մի
(աշխարհ,
Ուր ո՛չ կայ վիշտ, ո՛չ չարչարանք և ո՛չ տաղտո՜ւկ,
(սև՜ խաւար։



Միտքըս այնքան շուտ է հասնում այն երջանիկ
(աշխարհին,
Իսկ ես այստեղ դեռ չեմ հասած ծովի լռիկ ա-
(փերին.
Թող չըհասնիմ. ես հայեացքիս խորը կ՚ուղղիմ
(միշտ այնտեղ,
Ուր մի աստղիկ, յուսոյ աստղիկ փայլ է սփռում
(փառահեղ։
Շողա՛ դու միշտ պայծառ կանթեղ, շողա՛, շնչի՛ր
(անհուն ծով.
Խնդա՛, իմ սիրտ, և մի՛ քաշուիր սև ու դժնեայ
(կըսկիծով.
Այլ դու այս ճոխ գիշերուայ պէս անդորր մընա՛
(ու լռիկ
Մինչև փըրթի կեանքիս ծովում օրհասական փո-
(թորիկ...

* * *

Սև սև կոյտերով կապոյտ եթերում
Դիզվում են ամպեր.
Ջրերի վերայ որոտն է ճախրում
Ազա՛տ, անվեհե՛ր։
Ահեղամըռունչ ու խօլ ցասումով
Քամին է հեծում
Եւ մութ ալիքներն անվերջ գոռումով
Լերկ ժայռն են ծեծում...

Կեանքիս ալեկոծ ծովն է տարածուել
Ահա իմ դիմաց.
Ճախրում եմ վերան ես միշտ անարգել
Թևերըս պարզած.
Սէրըս նորա մէջ կանգնած է ամուր
Յաղթ ժայռի նըման,
Եւ անհուն վշտիս կոհակներն անլուռ
Ծեծում են նըրան...

Սեպտեմբերի 28, 1899
Տագանրոգ

## ԱՆԻ ՔԱՂԱՔ

Դաշտի մէջ միայնակ երիվարս եմ քշում.
Առջևս է քաղաքը, աշտարակ ու պարիսպ.
Ողջո՛յն ձեզ, շինուածքնե՛ր, մեծ քաղաք, քեզ ող-
(ջո՛յն
Յուզւում է սիրտս լուռ. և միտքըս, իմ հոգին
Թափառում են անոյոշ, — այդ դաշտում, ուր հիմա
գնում եմ, երբեմըն խաղում էր այրուձին. .
Դիակի, արեան տեղ ծաղկունք են անթառամ.
Քարերի կոյտերից նայում են ու բուրում
Սմբուլներ, վայրի սէզ, և թռչնոց ճոխ երամ..
Ո՛, դաշտեր. եթէ ձեզ լեզու տար մեծ Աստուած,
Կարո՞ղ էր ըզգայուն վառ սիրտը չըյուզուիլ՝
Լսելով ձեր խօսքեր, առնելի ձեր ասուածք.
Դուք չունիք խօսք, լեզու, բայց խօսք էք դուք
(ամբողջ,
Բերաններ բիւրաւոր բացուած են ձեր միջից.
Դուք չէիք անապատ, դուք չէիք գայլի որջ.
Մեծեր և իշխաններ ապրել էին ձեր մէջ.
Անա՛ ես մօտեցայ. ձիս էլ է պատկառում
Դարպասից հնադարեան սարսում է, չի մտնում...
Խոնաւ օձն է դիպչում ճակատիս, երեսիս,
Եւ անեղ կամարներ թնդում են յատակից,
Մտնում եմ քաղաքը—աւերա՛կ և թափի՛ծ.
Ճպուռն է ճռճռում քարի մէջ, խոտի մէջ,
Մողէսը պահ մտնում քանդուածքի ճեղքուած-
Պատի տակ սողում է, շրւում է օձը մեծ. (քում.
Չկա՛յ, ամբողջ չեն ո՛չ մի շէնք ու տաճար,
Շինուեցիք, քանդուեցիք ա՛խ ինչո՞ւ, ո՞ւմ համար,
Փառքերի, մեծութեան, հայրենի սրբավայր...
Անուրջի, մտքի մէջ լռիկ ջուրն Ախուրեան
Յամրաքայլ հոսում է. — նիրհի մէջ մերթ ընդ մերթ
Մրմունջներ է հանում, տրտնջում մեղմաձայն։



Ո՛, վիշտն ինձ տանջում է, և զարկուած, վար ըն-
(կած
չոն, այրուած քարերին թափում իմ արցունքս
Եւ մտոր ու մորմոտ ես նայում եմ գետնին.
Կը զարթնե՞ս, կը սթափուի՞ս իմ հոգիս դու նորից,
Կ՚ապրի՞ս նոր կեանքով, թէ ինչպէս աւերակ
Կը լռե՛ս, կը մարի՛ս կործանուած վշտերից։

1894 Նոյեմբեր.
Աղեքսանդրապօլ.

---

## ՈՐԲԸ ԻՐ ՄՕՐ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՌԱՋ

Ո՞ւր հըմայիչ ա՛յն առաւօտ,
Երբ դու նըստած որրանիս մօտ՝
Ասում էիր անուշ «Նանի՛կ»
Զգացմունքով վառ, երջանիկ։
Ինչպէս ծաղիկ մի սիրաբոյր՝
Գրկում էիր, տալիս համբոյր.
Լցնում սիրտս իմ մանկական
Սիրոյ աղբիւր անմահական։
Օրօրոցից կապում նարօտ
Աղօթքներով սրտի կարօտ
Եւ «գիր» կպցնում իմ շորերից՝
Ազատ լինիմ «չար աչքերից»...
Քանի՛ քանի՛ պաս ու ծոմով,
Մատաղներով, խունկ ու մոմով,
Ծնրադրած, լի հաւատով,
Արտասուքով և պաղատով
Խնդրում էիր իմ մուրազին՝
Ուխտ գընալով ա՛յս ա՛յն խաչին
Որ անվնաս ես մեծանամ,
Ապագայում լաւ մարդ դառնամ...

* * *

Մի փոքրիկ ճիչ արդէն բաւէր,
Կամ մի տեղըս եթէ ցաւէր,
Իսկոյն հրեշտակ մի պահապան՝
Ճար կ'անէիր դեղ ու դարման։
Եւ սընարիս մօտ հըսկելով
Չէիր թողնում քըշոցներով
Շուրջըս մի ճանճ հանէ ծպրուն,
Որ խանգարէ իմ անուշ քուն...

* * *

Ինչպէս գարնան կոկոն-վարդը
Բացուած էի. ի՞նչ էր դարդը,
Ի՞նչ էր տանջանք-չըգիտէի,
Թոթովախօս մանուկ էի,
Իբրև անհոգ մի թիթեռնիկ,
Հեռո՜ւ ինձնից գոռ փոթորիկ,
Ազատ հոգսից ու տանջանքից,
Հոգիս հրճւում անմեղ կեանքից
Ի՜նչպէս էիր սիրով նայում,
Գիրկդ առած ինձ փայփայում.
Թէժ կրակից, խեղդող ջրից
Քանի՜ փրկել փորձանքներից...
Հէնց սկսայ ոտքի կանգնել,
«Մայրի՜կ» բառը արտասանել,
Տէր ես կարծել քեզ աշխարհի
Անհուն ծովում հըրճուանքների...

* * *

Այսպէս հազար նեղութիւնով,
Կեանքդ մաշած դառնութիւնով
Լոյս ես բերել որդուդ ծնունդ,
Ջամբել **կաթը**՝ տալով սնունդ։
Եւ դու քանի՜ անքուն գիշեր
Պաչպչելով իմ վառ թշեր



Երգ ես ասել ու «ջանիկնե՜ր».
Թեւեր փըռած հրեշտակներ
Մանկական պարզ ժըպիտներով
Թերթևունքիս քուն բերելով
Գալիս էին տեղըս ննջած՝
Մանիշակներ սիրուն փնջած
Ածում գոգըս և ինձ թողում,
Ինչպէս զեփիւռ գարնան հովում.
Եւ երկնային մեղեդիներ
Անմեղութեան զգացումներ
Վառում սիրտս ու երազում
Նրանց ժըպտի հետ զրուցում։

* * *

Երկնից օրհնա՜ծ դու հրեշտակ կի՜ն,
Կեանք ես զոհել քո զաւակին.
Քանի՜ դառն մրուր, բաժակ
Քամել ես դու մինչև յատակ,
Քանի՜ լռիկ արցունք ու վիշտ
Թափել ես դու տանջանքում միշտ
Մինչև հասցրել ինձ հասակին.
Լաց ես եղել իմ արցունքին.
Երբ տխրել եմ — դու տխրել ես,
Երբ ծիծաղել — ծիծաղել ես.
Երբ նեղացել - տուել ես ծիծ,
Սովեցրել ես սիրե՛լ անբիծ,
Խօսե՛լ, խնդա՛լ, **չարն ու բարին**,
Ծունկ աղօթել անմահ Տէրին
Հոգիս պահած սրտիդ խորը՝
«Չոռ ու ցաւից» իմ մատները
Տաքացրել ես քո ձեռքերում,
Եւ մարմինը՝ քո ծնկներում
Աչքըս բացած քեզ եմ տեսել
Ե՛ւ օրօրոց և խաղալիկ.
Ուր է այժմ վայելք ու սէր
Քո խնամող մայրական գիրկ...

*
* *

Աւա՜ղ, թռա՜ն այդ օրերը,
Ինչպէս երազ մի վաղանցուկ,
Էլ չեմ տեսնել ա՛յն վառ **սէրը**,
**Սէր** պահպանող՝ կեանքիս նեցուկ...
Ա՛յնպէս թովիչ ո՛չ լուսնի շող,
Ա՛յնպէս մաքուր ո՛չ կաթիլ-ցող
Ա՛յնպէս տաք տաք ո՛չ ամռան շոգ,
Աստղ ու արև-նման ոչ որ...
**Սէր** եմ ասում, **սէր մայրական**
Ա՛յն զգացման նուիրական՝
Միաւորող յօդակապով,
Մի անմոռաց յիշատակով։
Ա՛խ, այդ **սէրն** եմ ուզում, մա՛յր իմ,
Ինչո՞ւ հետըդ տարար շիրիմ
Ու թողիր ինձ որբ ու մինակ
Ուրիշների դռներին փակ։

*
* *

Քո մահից յետ սրտիս խորքը
Սև վշտերի փոթորիկներ
Խորտակեցին իմ սէր, իմ **ուխտ**,
Տարա՜ն հեռո՜ւ տեղեր պանդուխտ...
Աստանդական երկրում օտար
Ո՞վ կը լինէր ինձ հոգատար,
Ո՞վ կը յիշէր մէջ աղօթքին,
Ո՞վ կը սեղմէր ինձ իր կրծքին.
Հողը օտար, ջուրը օտար,
Խորթ եմ նրանց.—ո՞վ մտիկ տար.
Օտար մարդիկ, ա՛րև, լուսին,
Դուռն է փակում իմ երեսին։
Ոյժից ընկած իմ խե՜ղճ ձեռներ
Բաղխել փորձում բաղդի դռներ,
Բայց կատակներ վայրենի, բիրտ
Ասեղի պէս ցցւում են սիրտ։
Ես կորցնում եմ զգայնութիւն,



Ողբում մարդկանց ունայնութիւն
Եւ ողբալով յուսահատ, լո՛ւռ՝
Վերջը գալիս դամբանիդ դուռ։..

*
* *

Այժմ նայի՛ր մա՛յրիկ անգին,
Թափառական որդուդ դէմքին՝
Ի՜նչ է դառել-նիհարացա՜ծ,
Ինչպէս աշնան տերև դեղնած։
Սիրտը սև է, վշտից աւա՜ր,
Ինքը քաղցա՜ծ, օրը խաւա՜ր,
Կեանքը կռի՜ւ-տանջանքի բո՜վ,
Աչքը թացոտ արցունքի ծո՜վ,
Ձայնը նուա՜ղ, կորա՜ծ ժպտուն,
Թափառում է անտէ՛ր, անտուն.
Իբրև բաղդի մի «հացկատակ»
Կուչ է գալիս մի պատի տակ...
Չունի հագին ոչ մի հագուստ,
Կեր ու խումից զուրկ է ապրուստ.
Չըկայ մայրը գորովալից՝
Պատսպարէ սովի ճանկից...
Դողդողալով ձեռք կարկառում,
Աղիողորմ սիրտ պատառում
Միայն որբիս հեծկլտանքը
Քամին լսում արձագանքը...

*
* *

Այո՛, **Մայրը մէկն է լինում**,
Նա էլ պառկած գերեզմանում.
Ա՜խ, ո՞ւր գտնեմ **առաջին սէր**,
Օ՜, մի տանջէք վիշտ ու հոգսեր...

*
* *

Ձմեռն անցաւ, եկաւ գարուն.
Ծիծառն ուրախ գտաւ իր բուն
Միայն դու ես, որ չես զարթնում,
Թշուառ որդուդ գիրկդ առնում

*
* *

Ծաղիկ կեանքի ժամանակներ,
Դուք մանկական յիշատակնե՛ր,
Ինչո՞ւ անցած անուրջներով,
Անդառնալի թռիչքներով.
Ա՜խ, ես ի՜նչպէս կուզեմ նորից
Հանդէս բերէք վառ անցեալից
Նոյն պատկերներ պայծառ, գողտրիկ,
Խանդակորով սէ՛րս, մա՛յրիկ…

*
* *

Քե՛զ է կանչում, մա՛յր կաթոգին,
Պանդուխտ երկրից եկած որդին.
Բա՛ց քո գիրկը նուիրական,
Տո՛ւր անուշ քուն հանգստական։
Ինձ չեն ժպտում օտար աստղե՛ր,
Օտար երկինք, օտա՛ր ծովեր,
«Հայրենիքի լաւ է փուշը
Քան օտարի մեղր ու նուշը»…

*
* *

Ամեն գիշեր և առաւօտ
Գալով յուզուած, սիրոյդ կարօտ,
Գերեզմանըդ համբուրումեմ,
Այս խօսքերով արտասւում եմ.
«Ո՞ւր հրմայիչ ա՛յն առաւօտ,
«Երբ դու նըստած որրանիս մօտ՝
«Ասում էիր անուշ «Նանի՜կ»
«Զգացմունքով վառ, երջանիկ»…

Շուլավէր. ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆ.



## ԱՆՁՆՈՒՐԱՑ ՈՐԲԵՐ.

Դառնաշնչով, ո՛վ գիժ քամի,
Խաղաղ կեանքի դու թշնամի.
Ի՞նչ ես փչում, ի՞նչ ես գոռում
Այն ամեհի, մութ անտառում,
Ուր որբ տղան ճամբից ընկած,
Ցրտից դողդող և կուչ եկած
Ման գալիս է իր քոյրիկին
Ծառերի մօտ, ծիւնի տակին։
Մի ժամ առաջ սիրողաբար
Զրոյց տալով քոյր և եղբայր
Անցնում էին այն անտառից,
Բայց դու, քա՛մի, ճանապարհից
Մոլորեցրիր այն խեղճերին,
Ցուրտ փչելով երեսներին.
Ձիւնով աչեր կուրացրիր
Ու իրարից բաժանեցիր։
Ո՞հ, չը թողիր, որ աներկիւղ
Որբիկները հասնէին գիւղ,
Ուր մուրալով կտոր հացին՝
Վախճան տային տանջող քաղցին։
Քանի՞ ծառեր շաղամարես,
Որբի սիրտը սարսափ ձգես.
Նա մոլորուած մանէ գալիս,
Անտառի մէջ ձայն է տալիս.
«Ո՞ւր ես, քոյրիկ…», բայց չես թողում,
Վզզոցներիդ մէջն ես թաղում
Նըկեղի ձայն այն որբիկի.
Հազիւ միայն արձագանքի
Պատասխանն է լսվում հեռո՜ւ
Քարափներում այն անարկու…»..

*
* *

«Անգո՛ւթ քամի, բաւակա՛ն է.
Այժմ որբիս ո՞վ պահպան է,
Իմ սիրասուն քոյրը չկա՛յ,
Օ՛, երդվում եմ — արևս վկայ
Թէ՛ պատահած լինի փորձանք
Մահու կըտամ իմ ամբողջ կեանք։
Գնամ ծիւնի՝ խորը մտնեմ,
Որտեղ լինի նրան գտնեմ»։

*
* *

Հէնց պատրաստուեց նա գնալու,
Իր քոյրիկին որոնելու.
Յանկարծ կանգնեց այդ միջոցին.
Ականջ դրեց ծըլվլոցին
Այն թռչունի, որ տխրագին
Նուագումէր ծառի ճիւղին։
Երգն էր աղի և սրտառու.
Որբը կանգնած մի քիչ հեռու՝
Բացականչեց. «սիրո՛ւն թռչուն,
Ափսո՛ս քո այդ աղօտ լեզուն
Ձեմ հասկանում։ Ի՞նչ ես երգում,
Արդեօ՞ք ուրախ լուր հաղորդում,
Թէ՞ մի տեղում քոյրս կենդան
Սպասումէ իմ գալստեան,
Թէ՞ ձիւնի տակ-վերջի՛ն շնչում
Օգնութեան է նա ինձ կանչում.
Թէ՞ տխուր լուր-բուք ու բորան
Արդէն հասցրին մահու բերան։
Ասա՛, թռչնա՛կ; ո՞ւր է քոյրս,
Այն թանկագին ծաղկաբոյրս,
Որ սիրէինք միմեանց գթով
Մեր մօր տուած խրատներով...



*
* *

Անհոգ թռչուն ազատասէր,
Ո՛չ առօրեայ չնչին հոգսեր,
Անխիղճ մարդկանց ո՛չ բռնութիւն
Քեզ չեն տանջում։ Երջանկութիւն
Եւ սէր կեանքի քեզ է տուած.
Առաւօտեան ծէգը բացուած
Ողջունում ես արշալոյսին,
Փառաբանում ա՛յն Արարչին,
Որ շնորհել է քեզ օ՛դ ա՛մպեր,
Ազատ երկի՛նք, ազատ հովե՛ր...
Իսկ ես որբս այս տատասկոտ,
Սին աշխարհում, հացին կարօտ,
Տանջանքի տակ ինձ խաչելով՝
Քաշ եմ գալիս հառաչելով։
Օ՜հ, մոլորուած այս անտառում,
Այս մթութեան տարտարոսում.
Ամեն տերև խշխշալիս
Ես դողումեմ, սիրտս լալիս...»

*
* *

Գիշերն հասաւ, մութը տիրեց։
Այն թռչունը հանդարտ լռեց.
Արթնանալով խաւարի մէջ
Բարձր ժայռի գլխին բուէն
Ձարագուշակ բո՜ւ է կանչում.
Ծեր անտառը ողջ շառաչում
Ոռնոցներից գայլ-արջերի,
Խշշոցներն էլ տերևների
Վայրագութիւն շուրջը փռում.
Ո՞վ չի վախել այն խաւարում:
Որբը մենակ սարսափումէր,
Մթութեան մէջ խարխափումէր,
Որոնելով իր քոյրիկին՝
Ձայն է տալիս կողկողագին.

Ո՞ւր ես, քո՛յրիկ, արի՛, դուրս ե՛կ,
Ա՜խ, երանի՜ լինի ցերեկ՝
Նորից տեսնեմ իմ քոյրիկին,
Մատա՜ղ գնամ նրա կեանքին»։

* * *

Անա՛ ուժգին քամու վզզոց
Հիտնէ բերում ինչ որ անքոց
Խոր անդունդից, ուր ժայռերը
Դժնատեսիլ գագաթները
Վեր են ուղղել ամպերի մէջ
Շղթաների շարքով անվերջ.
Սասանումեն ամպրոպային
Ժայթքումներով, դժոխային
Որպէս խաւար՝ եռում սաստիկ
Սառնամանիք և փոթորիկ,
Աղմկում են և գղրդում
Զարհուրելի՛ այն անդնդում…

* * *

Մէնակ որբը, ա՜խ, ինչ անի
Այն ուղղութեամբ լսուող ձայնի
Թեթև, յուշիկ նա քայլերով
Ձիւնի վրայ սայթաքելով
Առաջ անցաւ դէպի անդունդ,
Տեսաւ յանկարծ մի ձիւնի գունդ,
Որի տակից լսեց մի ձայն,
Որբն իմացաւ քոյրիկն է այն.
Արձանի պէս կանգնեց նա լուռ,
Ցնցողութեան անցաւ սարսուռ
Մերկ ու տկլոր անդամներով.
Խելքը կորցրած նա ձեռքերով
Սկսեց ձիւն յետ – յետ տալով,
Հետն էլ դառն արտասուելով
Ո՛հ, շօշափել քրոջ մարմին,
Սակայն ցաւեր հազար ու մին
Նորից որբին պաշարեցին,



Երբ նա ընկած պարանոցին՝
«Քոյր» է կանչում, – ա՜խ, ձայն չըկայ,
Ջանը կապտած ու անզգայ.
Հազիւ վերջին լսվումէ շունչ,
փայտացել է երեսն ու դունչ:

* * *

Ա՜խ, Տէր Աստուած, ես ի՞նչ անեմ,
Ի՞նչպէս քրոջս բարձրացնեմ
Բարդ բարդ դիզուած ձիւնի տակից,
Երբ ձեռքերս սառիլ ցրտից.
Երբ ոյժ չըկայ իմ ձեռներում,
Արիւն պաղէ երակներում,
Լաւ է, շորս հանեմ ծածկեմ,
Վրան ընկնեմ, տաքացնեմ
Սառ մարմինը. ձեռը, ոտը,
Մինչև բացուի առաւօտը,
Արև ծագի փոթորկի դէմ,
Գուցէ այս կերպ կեանքն ազատեմ»:

* * *

Շատ խաչերով գիշերն անցաւ.
Առաւօտը երբ լուսացաւ՝
Արեգակի ճառագայթներ
Շողեցնելով ողջ գագաթներ
Ծառաստանի այն անտառի
Եւ խոռոչներ անդունդների,
Թարշարժ արին պառկածներին
Քոյրը զարթեց և աչքերին
Ջէր հաւատում, որ եղբայրն իր
Այնպէ՞ս ամուր և սիրալիր
Իրեն ամբողջ գիրկն էր առել,
Բայց այնպէս էր ցրտից սառել,
Որ նա ինչքան աշխատումէր
Եւ ձեռքերով տրորում էր.
Իր եղբայրը զարթնի քնից,
Բայց նա արդէն սառնութիւնից
Ցուրտ գիշերին դողդողացել

*Եւ յաւիտեան շունչը փչել,*
*Որովհետև իր հագի շոր*
*Ծածկել քրոջ, ինքը տկլոր,*
*Վերին ձիւնն էր մաղել, թակել,*
*Մինչ ոսկրներ քամին ծակել.*
*Իսկ քոյրիկը եղբօր տակին*
*Տաքացել էր և նա կրկին*
*Կենդանացած՝ շա՜տ հեկհեկաց.*
*Առաւօտ է, եղբա՛յր, վե՛ր կաց.*
*Քանի պայծառ, տաքէ օրը,*
*Լսիր թշուառ քո քուրը,*
*Շուտ այստեղից մենք հեռանանք,*
*Հաց մուրալու գիւղը գնանք,*
*Քանի՞ քնես դու երազում,*
*Ես սոված եմ՝ հա՜ց եմ ուզում*
*Եւ մեռնում եմ ուշագնաց.*
*Ո՞ւր մեզ ձգեց անգութը ցած*
*Այն գիժ քամին երէկ գիշեր.*
*Ո՜ւմ մտքիցը խելի կանցնէր,*
*Թէ անտառում մոլորուելով*
*Քամու ձեռքից և մահ գալով*
*Կըգաս այստեղ ինձ կըգտնես,*
*Տաքացնելու վրաս կընկնես...»*

* * *

*Նա մօտեցաւ քնած եղբօր,*
*Ողբա՜ց անվերջ արտասուաթոր,*
*Տեսաւ նրան մեռա՜ծ ցրտից։*
*Շատ «ա՜խ» քաշեց խորը սրտից.*
*«Իմ* **անձնուրա՜ց, խեղճ** *եղբայր,*
*Ինձ կեանք տուիր, ինքդ մեռա՜ր,*
*Ազատելու համար քուր՝*
*Չխնայեցիր վերջին քո շոր,*
*Որ տակիցդ դու հանեցիր,*
*Տաքացնելու ինձ ծածկեցիր,*
**Անձնանուէր** *ես էլ նման՝*
*Մէկ տեղ իջնենք մէկ գերեզմա՜ն...*
*Թո՛ղ գիժ քամին որքան ուզի*



*Այս անդնդում ուժգին փչի...*
*Մենք կը քնենք անժամանակ՝*
*Յաւիտ հեռո՜ւ, սառն հողի տակ...*

* * *

*Լացե՜ց սրտից մելամաղձոտ*
*Եւ նա ընկա՜ւ դիակի մօտ*
*Անշնչացած—այն անդնդում,*
*Ուր գիժ քամին էր դղրդում...*

---

*Քանի՜ այսպէս խուլ անդունդներ*
*Շաղախել են դառն արցունքներ*
*Խեղճ որբերի անկարեկից,*
*Որ մեռնում են քաղցի ճանկից...*

*Շուլավէր.* ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆ.

---

## ԱԼԻՇԱՆԻ ՄԱՀԸ

*Բա՛ց քո գիրկը, քո օթեւանն սրբազան,*
*Հա՛յր գըթառատ, ողորմած,*
*Քե՜զ է գալիս հայ աշխարհի մեծ գուսան,*
*Ազգի սիրով պըսակուած։*

*Մեղուն մըշակ հայրենի հէգ աշխարհի,*
*Մինչ վերջին ժամն հանգստեան*
*Մըտքի, լոյսի սերմացան էր նա այրի,*
*Գըրչին ալիք ծերութեան։*

*Աւարայրի տըխուր բըլբուլ վըշտաշունչ,*
*Վարդ ու ծաղկին կարօտած՝*
*Նա երգում էր հայի մորմոք ու մըրմունջ,*
*Հայի փառքը կորուսած...*

Նա երգում էր, նա պատմում էր աշխարհին
Բազմադարեան հայ կեանքի
Տըխուր վէպը, հայ վիճակը նոր ու հին,
Հայի խաչը տանջանքի...

Բա՜ց քո գիրկը, հա՜յր գըթառատ, ողորմած,
Հի՞ւր է գալիս քեզ յաւէտ
Երգ ու գըրչով հայի սըրտում սըրբացած
Ազգի գուսան-նահապետ։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ.

20 Դեկտեմբերի 1901
Մոսկուա։

---

## ՈՒ՞Ր ԵՍ ՀԱՅ ԲԼԲՈՒԼ[1]...

(Գամառ Քաթիպայի մահարձանի առաջ)

Ո՞ւր ես, հա՛յ բլբուլ, ձայնի՛դ է կարօտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը հարոտ...

Սև սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սև թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Վա՜յ, սև գիշեր է մեր կեանքը մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում.
Էլ մեզ չե՞ս երգում գարնան առաւօտ,
Ո՞ւր ես, հա՛յ բլբուլ, ձայնի՛դ ենք կարօտ։

1. Այս ոտանաւորը կարդացուած է Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքում տեղի ունեցած Գամառ-Քաթիպայի մահարձանի բացման հանդէսին (23 Սեպտեմբ. 1901), ուր հեղինակը ներկայ է եղել, իբրև պատգամաւոր Մոսկուայի հայ գաղութի և հայ ուսանողութեան կողմից։



Մեր գլխին երկինք մըթնել, սևացել,
Դըժոխքի դուռ է մեզ կեանքը բացել,
Բախտն էլ մեզանից երես շուռ տուել,
Խեղճ հային կրակի բերանն է գըցել.
Ըրվո՛ւմ ենք անմեղ... Սիրտներըս հարոտ՝
Քո դեղ ու դարման երգին ենք կարօտ...

Սարէ-սար ընկած՝ մենք «վա՜յ» ենք կանչում,
Բախտաւոր ազգեր մեզ չեն ճանաչում.
Մենք քաղցա՜ծ, ծարա՜ւ, անճա՛ր, խըղճալի՛
Հաց-ջուր ենք ուզում, մեզ թոյն են տալի.
Մեր ճամբէն դժուար, մեր ճամբէն քարոտ,
Ո՞ւր ես, հա՛յ բլբուլ, ձայնի՛դ ենք կարօտ...

Անտէր հօտի պէս, ամեն տեղ կեանքում
Հալվում, մաշվում ենք գայլերի ճանկում.
Երկի՛նք ենք նայում—նա չի՛ մեղքանում,
Մեր լեզուն կըտրած՝ մեզ խաչ են հանում,
Անձէ՛ն մատաղ ենք՝ կապած ձեռ ու ոտ,
Ո՞ւր ես, հա՛յ բլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Լեզուով չի՛ պատմուի հայի դարդ ու ցաւ,
Հայի արիւնով աշխարհն ներկուեցաւ.
Սի՛րտն է մըղկտում, սիրտն է սառնում,
Ոչ ոք մեր լացին ականջ չի անում,
Ըթի՛մ կանգնել ենք գերեզմանիդ մօտ,
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ ենք կարօտ։

Բլբո՛ւլ, դու մեզ հետ տանջվում՝ ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.
Դու ասում էիր—ա՛զգ իմ, մի՛ սըգա,
Յուսով եմ, քո վարդ-գարունն էլ կը գայ.
Բայց, ա՜խ, չենք տեսնում գարուն վարդահոտ.
Ո՞ւր ես, հա՛յ բլբուլ, ձայնի՛դ ենք կարօտ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

21 Սեպտեմբերի 1901 թ.
Ռոստով-Դոն։

---

I

## ԵՐԿՈՒ ՓՈԹՈՐԻԿ

Այս չարագուշակ, ահաւոր ժամում,
Երբ ծովն ալեկոծ քար քարին տալով,
Խուլ, դժոխային ձայներ է հանում
Եւ ափերն լիզում սպիտակ փրփուրով.
Եւ հսկայական լեռների նման,
Մերթ բարձրանում են վայրագ ալիքներ,
Եւ մերթ խորտակվում ու ծովի վրան
Բացում անհունի, խաւար անդունդներ,
Ես նստած ափին, պղտոր հայեացքով
Ահեղ տարերքի խաղին եմ նայում
Նայում — և տանջուած, վշտայոյզ մտքով
Հեռո՜ւն, դէպի միւս եզերք սլանում.
Ե՛ւ այնտեղ ահա մի ա՛յլ ա[illegible]հաւիրք
Սոսկալի՜ մի խաղ անողոք կեանքի.
Այնտեղ տեսնում եմ արեա՜ն փոթորիկ,
Նահատակութի՜ւն մի ամբողջ ազգի:
Եւ այնտեղ արիւն — արցունքի ծովում
Որպէս լեռնացած այս սև ալիքներ,
Իրար են դիզվում փլատակներում
Կիսամե՜ռ զոհեր, անթա՜ղ դիակներ...
Եւ մտածում եմ — ծովի փոթորկին
Շուտ կը յաջորդէ արև փափագած,
Բայց, ա՜խ, ո՛վ գիտէ, այն անբախտ ազգին
Փոթորկից յետոյ ի՞նչ է վիճակուած...

II

1897 թ.

Դարձեա՛լ Նոր-Տարի... Օ՜ թո՛ղ նորանոր
Վառվռո՜ւն յոյսեր, գարնա՜ն երազներ
Մեր կեանքը, Հայե՛ր, յուզեն և այս օր,
Նորի՛ց բորբոքեն մեր լքեալ սրտեր։



Ի՞նչ անենք, թէ ցուրտ, մահաշունչ ձմեռ
Պատել է այսօր հայրենի աշխարհ,
Թօշնե՜լ են վարդեր, մարե՜լ են աստղեր,
Մեր կեանքը չունի՜ պարզ երկնակամար։
Ի՞նչ անենք, թէ մեզ փափագա՜ծ կեանքի
Դեռ չէ շողշողում սիրուն առաւօտ,
Անարդար մատնուած վշտի. տանջանքի,
Ապրում ենք անլոյս, անջո՛ւր ու անօդ...
Տանջանքը, հայե՛ր, ծընում է և՛ յոյս.
Յուսով ներշնչուած ընկնո՜ւմեն զոհեր.
Թո՛ղ տանջուինք... մօ՜տ է և՛ մեր արշալոյս,
Միայն թէ յառա՛ջ, յառա՛ջ անվեհեր..

ՄՈՍԿՈՒԱ. ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ.

---

I

## ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ...

Սիրելի՛ ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ մատաղ կեանքիս ես ան հասակում
Այնքա՜ն տխուր է հնչում իմ քնար,
Վիշտ ու թախիծ ես կարդում իմ սրտում։
Ծնուած հէգ երգիչ մի դժբաղդ ազգի,
Միշտ մռայլ տեսայ երկինքը գլխիս.
Ես շատ վա՛ղ ուսայ տանջանքը կեանքի,
Վա՛ղ մտերմացայ վըշտի հետ հոգիս։
Անմեղ հասակից օրօրոցիս մօտ,
Ուր պէտքէ սիրտս մեղմ օրօր շոյէր,
Ուր պէտքէ ժպտար կեանքի առաւօտ,
Ես տեսայ միայն սև ու մութ օրեր...
Տեսայ կատաղի չարութեան մատնուած
Անզէն թշուառներ ժանտ դահճի առաջ.
Լսեցի անտուն, դռնէ-դուռ ընկած
Հարազատ ազգիս աղերսն ու հառաչ...

Այո՛, ընկե՛ր իմ, դու մի՛ զարմանար,
Որ գարուն չունի էլ մատաղ հոգիս.
Արիւն–արցունքով ներկուած իմ քնար
Ազգիս վշտին է արձագանգ տալիս...

II

## ԴՈՒ ԱՆՎԻՇՏ...

Դու անվիշտ երգ ես խնդրում հայ երգչից
Ներկայ օրերին, նազելի՛ ընկեր.
Բայց, տե՛ս արիւն է կաթում իմ սրտից,
Աչնիցս հոսում այրո՞ղ արցունքներ...
Զարագոյժ ամպեր, լեռների նման,
Եկել կիտուել են մեր անտէր գլխին.
Մռա՞յլ հորիզոն, հեռւո՛ւմ Գողգոթան,
Ծա՞նր է մեր խաչը, դժո՞ւար–մեր ուղին...
Մենք կեանք մաշեցինք այս անհաւասար,
Դարևոր կռուի փոթորիկներում,
Բայց յաղթանակի այգը լուսավառ
Չըշողաց մի օր հայրենի երկրում:
Թափուեց և՛ արիւն, ընկան և՛ զոհեր,
Բիւրաւո՞ր զոհեր անզուսպ չարութեան,
Բայց դարձեալ նոյն վիշտ, նոյն դաժան օրեր,
Նոյն խաւար կեանքը, որպէս գերեզման...
Վե՛րջ ուրախ երգիս, իմ չքնա՛ղ մանուկ,
Էլ ի՞նչ ուրախ երգ ներկայ օրերում.
Տե՛ս, ծով է կապել հայի արտասուք,
Կեանքը սևացել հայրենի երկրում...

ՄՈՍԿՈՒԱ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ.

---



## ՀԱՅ ԵՐԳՉԻՆ [1]

Դա՞ռն է մեր կեանք, տխո՞ւր մեր օրեր,
Չկա՛յ մեզ հանգիստ, չկա՛յ խնդութիւն.
Միայն տառապանք և անվերջ վշտեր
Մեր հէգ սրտերից քամում են արիւն...
Նայում ենք վերև–ամպամած երկինք.
Նայում ենք ներքև–շիրիմ ոտքի տակ,
Նայում ենք մեր շուրջ–ահեղ փոթորիկ
Իսկ մեր ձեռքերին–շղթայ ու կապանք...
Եւ որպէս խաւար, մռայլուած գիշեր,
Անզօր ողբում են մեր սիրտն ու հոգին.
Եւ քանի՛ ըղձեր, քանի՛ խորհուրդներ
Ճնշուած նիրհում են մեր կըրծքի տակին...

* * *

Դա՞ռն է մեր կեանք, տխո՞ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդել է ստրկութեան շղթան.
Օ՛, երգի՛չ, երգի՛ր մեզ հզօր երգեր,
Բոցավառ երգեր ոգևորութեան:
Երգի՛ր մեզ անահ, կորովի ձայնով
Փառք և յաղթանակ փայլուն գործերի,
Երգի՛ր, որ ազատ քնարիդ լարերով
Ցնցես թելերը թըմրած սրտերի..
Երգի՛ր մեզ այն հին երգը դարևոր,
Որ մի ժամանակ թնդալով ուժգին
Մարտի փոթորկում–վսե՛մ, փառաւո՛ր
Դափնիք են ձօնում մեր քաջ պապերին...
Երգի՛ր... թո՛ղ քո երգն անկեղծ, ոգելից,
Որպէս ջերմ աղօթք հայրենասէրի,
Ցըրու է մռայլը վըհատ սրտերից,

1. Կարդացուած է բանաստեղծ Ս. Շահազիզեանի 30–ամեայ յոբելեանի հանդէսին 1892 թ. Ապրիլի 9ին Մոսկուայում:

Բանայ մեզ աղբիւր ոսկի՜ յոյսերի·
Թո՛ղ քո ոգեշունչ, կարող երգերով
Ծովի պէս յուզուի հայրենի աշխարհ.
Թո՛ղ նըրանք մեր ծանր ուղին հարթելով,
Հային պատրաստեն նոր կեանքի համար···
Դա՜ռն է մեր կեանքը, տխո՜ւր մեր օրեր,
Մեզ կաշկանդել է բռնութեան շղթան
Օ՜, երգի՛չ, երգի՛ր մեզ հըզօր երգեր,
Բոցավա՜ռ երգեր ազատութեան···

МՈՍԿՈՒԱ — ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

---

ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐԻՑ

I

## ԹՈՒՔԸ

Ասումեն—թուքը ո՛յժ է զօրաւոր,
Մարդուն կարողէ իր պատուից գըցել·
Բայց տեսէ՛ք մեր մէջ··· նա՛ պատուաւոր,
Ով միշտ երեսը թըքովն է լուացել···

II

## ԵՐԿՈՒ ԵՐԵՍ

Թուքը երբէք քեզ չի բերել մեծ վընաս,
Թէ որ կեանքում երկու երես ունենաս·
Մէկ երեսից ի՜նչքան ածեն թուք ու մուր,
Միւսը կըմնայ մի՜շտ մաքուր···



III

## ՓՐԿՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ

Մեղքից փրկուելու կայ հեշտ ճանապարհ·
Շատերն են կանգնած այդ ճանապարհում—
Աջ ձեռքով նըրանք քանդումեն աշխարհ,
Ձախ ձեռքով ժամում մոմեր են վառում···

IV

## «ՁՈՒԽՏԸ» ԵՒ «ԿԵՆՏԸ»

Մարդը տըգեղ, կուշտ ու կոպիտ,
Հոգին՝ դատա՜րկ, ջէբը՝ լի՜ք·
Կին է առել ծաղկափըթիթ,
Իբրև ձեռքի խաղալի՜ք···

---

Արշի՛ն, հաշիւ մարդու գլխում,
Ուշ ու միտքը փողի մէջ·
Սիրոյ ծարաւ կընկայ սըրտում,
Նրազներին չըկա՜յ վերջ···

---

Կեանք են անցնում մի յարկի տակ,
Բայց սըրտերով խորթ իրար·
Տարբե՜ր ձըգտում, տարբե՜ր ճաշակ,
Կինը—կըրա՜կ, մարդը—քա՜ր···

---

Եւ նայելով ես այդ զոյգին
Միտք եմ անում—թէ մի օր
«Ջուխտի» կողքին··· «կենտը» բըսնի···
Ո՞վ է արդեօք մեղաւոր···

ՄՈՍԿՈՒԱ — ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ·
1901 թ

---

I

## Ն Ա Ւ Ա Կ

*Վազի՛ր, իմ նաւա՛կ, հասի՛ր ծովափին՝*
*Ալիքի կուրծքը պատառոտելով·*
*Այնտեղ թող հանգիստ գտնեմ վերստին՝*
*Իմ տառապանքը ծովին յանձնելով։*
*Իմ շուրջը խաւար, ահռելի գիշեր,*
*Հողմերի սաստիկ ահեղ մռնչիւն.*
*Չորս կողմըս ջրեր և անվերջ ջրեր*
*Չորս կողմըս անհուն սև տարածութիւն։*
*Բայց այնտեղ, հեռու, աստղիկի նման*
*Փայլում է մի լոյս պայծառ ու մենակ,*
*Այն նայում է մեզ փարոս փրկութեան.*
*Վազի՛ր դէպի նա, սիրո՛ւն իմ նաւակ։*
*Թո՛ղ մռընչալով սև ալիքները*
*Սոսկալի անունդ բանան առաջիս·*
*Թո՛ղ խաւարի մէջ վայրագ հողմերը*
*Սպառնական ձայնով սուլեն ականջիս։*
*Դեռ յոյս ունիմ ես սրտումըս պահած,*
*Որ միշտ ինձ առա՜ջ առա՜ջ է տանում*
*Եւ քանի նա կայ, քանի չէ մարած,*
*Ոյժ կայ վարելու և իմ ձեռքերում։*
*Եւ խաւարը չէ՛ յաւիտենական,*
*Յաւիտենական չէ՛ ալէկոծում.*
*Ես հաւատում եմ արևի ծագման,*
*Ես հաւատում եմ ծովի հաշտուելուն·*
*Բաղձալի ափին կը հասնեմ շուտով,*
*Շուտով կը տեսնեմ սիրելի դէմքեր,*
*Եւ նոքա անկեղծ, ուրախ ողջունով*
*Կը լուսաւորեն մռայլ իմ պատկեր·*
*Վազի՛ր, իմ նաւա՛կ հասի՛ր ծովափին՝*
*Ալիքի կուրծքը պատառոտելով·*
*Այնտեղ թո՛ղ հանգիստ գտնեմ վերստին՝*
*Իմ տառապանքը ծովին յանձնելով։*

*Մոսկուա·* 1888 *թ*



II

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

*Տանջանքների մէջ դու պիտի ապրես,*
*Որոնք օրէցօր պիտի բազմանան·*
*Մորմոքուած սրտումդ դու պիտի կրես*
*Դարաւոր խոց ու հասարակութեան։*
*Անվիշտ շատ օրեր չես դու տեսնելու·*
*Թունաւորուած են նոքա յաւիտեան·*
*Քո ուրախ օրը խառն է լինելու*
*Նեղութիւններով խըստամբերութեան։*

* * *

*Սակայն յաւիտեան դու չես վըհատիլ*
*Եւ առաջ կ'երթաս հաստատ քայլերով,*
*Եւ կեանք ու աշխարհ դու չես անիծիլ՝*
*Քո անցած յոյսերն ծաղրի մատնելով։*
*Ո՛չ, դու յաւիտեան նոյնը կը մընաս*
*Ազնիւ գործերի կարող ջատագով·*
*Անվըհատ առա՜ջ, առա՜ջ կ'ընթանաս*
*Գալիք տենչալի փըրկութեան յուսով·*

* * *

*Կեանքը կըլինի քեզ համար խորին,*
*Անհուն գիտութիւն, ուր պիտի զննես*
*Բընութեան լեզուն և մարդու հոգին,*
*Ուր մինչ գերեզման պիտի սովորես։*
*Կեանքը քեզ համար կըլինի թատրոն,*
*Ուր հոգի կըտաս հասարակութեան·*
*Կեանքը քեզ համար—բարձըր ամբիոն*
*Բարւոյ, գեղեցկի և ճըշմարտութեան։*

1889 *թ*

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒՉԵԱՆ

I

## ՍԼԱՔԸ ԵՒ ԵՐԳԸ

(Լօնգֆէլլօյից)

Ազատ օդում ես իմ նետը ձըգեցի.
Նա սլացաւ ընկաւ. բայց ո՞ւր–չը գիտեմ,
Որովհետև այնքան արագ նա թռաւ,
Որ սլաքըն անտեսնելի ինձ եղաւ։

——

Ազատ օդում ես իմ երգը երգեցի.
Նա սլացաւ ընկաւ. բայց ո՞ւր–չը գիտեմ.
Ա՞յն ո՞վ ունի այնքան սրատես, վառ աչեր,
Որ նըւագի թռիչքին էլ հետևէր.

——

Շատ չէր անցել այդ օրուանից–և ահա
Կաղնու վրայ գըտայ նոյն ողջ իմ սլաք.
Եւ իմ երգը՝ ըսկըզբից մինչև վերջ՝
Նոյնպէս գըտայ–բարեկամիս սըրտին մէջ։

*Մոսկուա. 1889 թ*

II

## ՄԻՆԱԿ ՃԱՆԱՊԱՐՀ

Արդէն որոշուած է իմ ճանապարհ,
Որով գընում եմ աներկբայ հոգով.
Որքան էլ դըժուար լինի ինձ համար՝
Ես պիտի երթամ իմ ընտրած շաւղով։



* * *

«Անփո՛րձ պատանի,–մի ձայն եմ լըսում,
Փոխի՛ր տատասկոտ, փըշոտ այդ ուղին։
Շուտով քո առջև անդունդ է բացվում,
Ուսկից վերադարձ չըկա՞յ անցորդին»։

——

Ես պէտքէ երթամ, թէկուզ և իմ բեռը
Սուրբ խաչի նըման ծանրանայ մէջքիս
Ես պէտքէ երթամ, ուր որ իմ քայլերը
Տանելու լինին թըշուառականիս։

*Մոսկուա. 1886 թ* ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

I

## ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԻՆ

Ցուզուած կոհակներն գալիս են զարնում
Փըրփըրած ափի հըսկայ լեռներին
Լեռները հըպարտ, լեռները կանգուն
Նայումեն հպարտ մըրըրկած ծովին։

——

Երկինքը գոռում, շանթեր է թափում
Հըսկայ լեռների սուր գագաթներից
Լեռները հըպարտ, լեռները կանգուն
Նայումեն հանդարտ գոռոզ փոթորկին

——

Բայց խոր ձորի մէջ լեռների կըրծքում,
Ահարկու մի ձայն է թընդում ուժգին
Այն լեռներըն են այնպէս ծիծաղում,
Ծաղրում ապըստամբ թըշնամիներին:

*Թիֆլիս. 1891 թ*

II

## ՄԵՐ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Անվհատ հոգով և միաբան
Բարձր հընչեցրէք ձեր ազնիւ տաղեր,
Ինչպէս անտառում նորադարձ գարնան
Երգումեն աշխոյժ նորեկ թըռչուններ։
Ծառերի վրայ սև ագռաւները
Միասին խըմբուած թո՛ղ անվերջ կըռռան.
Մի՞թէ հընչական ձեր նուագները
Խըռպոտ ձայներում պիտի խլանա՞ն։

* * *

Երգեցէ՛ք խըրոխտ… փոյթ չէ, թըշնամին
Թո՛ղ մաղձով լըցուած ձեզ ծաղըր անէ.
Հաւատի եղէք-գալիք սերունդին
Նոցա ծաղրանքը չըպիտի հասնէ։
Բայց ձեր երգերի լայն ալիքները
Երկա՜ր կըզարնուեն մարդկանց սըրտերին,
Ինչպէս բարկութեամբ լի կոհակները
Զարնվումեն ժէռոտ-քարոտ ափերին։

Թիֆլիս 1890 թ. ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

---

## ԵՐԿՈՒ ԳԻՇԵՐ

Աստղոտ ու պայծառ, լո՜ւռ էր այն գիշեր.
Ծաղիկ ու լուսին մեզ կը ժպտէին.
Մշտավառ, ուրախ անցեալի յուշեր,
Զինջ ապագայի վարդ յոյսեր տային։
Ու սիրակարօտ, քնքուշ փարումով
Մեր շըթունքները սէ՛րը ծծեցին.
Բոսոր վարդերը քաղցրիկ բուրումով
Սիրոյ ժամերը լո՜ւռ խնկարկեցին…



* * *

Մռա՛յլ ու տժգոյն, լու՜ռ էր այն գիշեր,
Երբ թափառէի վայրերը նախկին.—
Ա՜խ, արդէն մոռցար, դու ալ չե՛ս յիշեր
Անցեալի դիւթիչ ժամերն թանկագին –
Վարդերը դալուկ, թռռմած գլխիկոր,
Մեր սիրոյ մահը լռիկ ողբացին.
Մի՛ս մինա՜կ էի… վարդերը բոլոր,
Սիրոյ ժամերը զո՜ւր խնկարկեցին…

ՀՐԱՆՏ - ՎԱՀԷ

---

## ՄԵՐ ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՆ

(Նրա մահուան առթիւ)

Մըրկածուփ, փրփրադէզ
Ծովի ափին հեռաւոր
Կանգնած էր մի՝ հսկայի պէս՝
Բարձր փարոս լուսաւոր։
Հայոց մըռայլ փլատակներից
Փարատելով խօլ խաւար,
Նա իւր անհուն բարձունքներից
Լոյս էր թափում հայ աշխարհ։
Բայց փոթորկի անհեղ ժամին
Մեր փարոսը տատանւեց,
Դաժան ծովի ալիքներին
Նա զո՜հ գնաց-տապալւեց։
Աւա՜ղ… հանգա՜ւ… Մարե՜ց յանկարծ
Հայ աշխարհի վառ ջահը.
Էլ նա չը կայ-տարա՛ւ անդարձ
Նըրան անգութ, սև մահը…

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Նոյեմ. 17 ին 1901 թ
Թիֆլիս.

## ԻՄ ԹՇՆԱՄՈՒՆ

Քանի իմ սրտի մէջ վառվումէ
Սրբազան կայծը անհանդուրժելի,
Քո բոլոր ծիգը զուր, անզօրէ.
Իմ զգացմունքը քեզ չի խոնարհի։

———

Քանի իմ սիրտը բաբախումէ
Հէգ արդարութեան սուրբ գաղափարով,
Անմտութիւն չէ՞, ասա՛, միթէ
Խեղդել այդ ձայնը ամեն հընարով։

———

Քանի իմ հոգին չի վարակուել
Նիւթապաշտական հրապոյրներով,
Արդեօք կարո՞ղ է ժանգը սիրել,
Երբ ես ատումեմ իմ բոլոր ոյժով։

———

Քանի իմ խելքը ջատագով է
Սրբազան գործին և աշխատութեան,
Մի՞թէ, ասացէք, հնարաւո՞ր է
Խօսքեր շռայլեմ անարգ ծուլութեան։

———

Քանի իմ գրիչը աշխատումէ
Պաշտպան լինել մի խեղճուկ սերնդի.
Մի՞թէ պղծութիւն, լրբութիւն չէ՞,
Որ օրօր կարդամ խաղաղ կեանքի։

———

Երբէ՛ք երբէ՛ք ո՛վ իմ թշնամի,
Արհամարհումեմ քո հզօր շանթեր.
Որքան սրես քո նետը ամեհի,
Այնքան կըվառուեն իմ զգացմունքներ։

———



Եթէ գիտենամ մատաղ կեանքս
Անգութ խորշակից պիտի թառամի
Սրբազան ուխտէս, վեհ հաւատըս
Քո հաճոյքներին ես զոհ չիմ բերի։

———

Այս անվախ կրծքի տակ վառվումէ
Մի գոռ սիրտ հուժկու, անյաղթ կայծերով,
Նա պիտի ժայթքէ, պիտ՝ բորբոքուէ,
Ջի մարիլ երբէք ո՛չ մի հնարով։

8 Յուլիսի, 1889
Շուլաւէր.

ՍՐԻՆԳ

---

I

## ԾԱՌԻԿ

Ա՛յ, նորատունկ իմ ծառիկ,
Շիւեր արա գեղեցիկ,
Արմատ ձգի դու հողում,
Որ չը շարժի քեզ մրրիկ։
Ես ամեն օր քեզ համար
Ջուր կը բերեմ սափորով,
Եւ քո տակդ կը փորեմ,
Որ զօրանաս դու շուտով։
Ծաղի՛կ, տերև՛ ու պտուղ
Թող զարդարեն քո ճիւղեր.
Նրանց վրայ թող երգեն
Անոյշ ձայնով սոխակներ։
Մի՛ վախենար չար որդից,
Որով լիէ ողջ աշխարհ...
Նրանց համար մեր երկիր
Վաղուց դառել է օտար...

Հաստատրո՛ւ քո բունը,
Այն ժամանակ փոթորիկ
Թող մռնչայ, որոտայ,
Չի վնասիլ, քեզ ծառիկ...

20 Մարտի· 1882 թ

II

## ԳՈՒԹԱՆ

Իմացայ եկաւ գունաթափ աշուն
Մերկացան դաշտեր կանաչ գորգերից,
Եւ անտառների դեղնած տերևներ
Զրկուելին իրենց հարազատ մօրից...
Ցաւումէ աշխարհ, ողբումեն ծառեր,
Սակայն դիմացի՛ր, ո՜վ հզօր թիկունք.
Տանս անկիւնում սրածայր իմ խոփ
Ժանգոտուել է և խփել իր աչունք։
Դէ՛, շուտ շարժուի՛ր իմ ձեռում խարտոց,
Լուա՛ խոփի դէմք, բա՛ց քնած աչեր,
Որ նա արթնանայ – պատրաստ լինի
Անվախ վարելու արգաւանդ դաշտեր։
Եւ դեռ չըծագած ուժաթափ արև՝
Հասնիմ մերկ դաշտը եզներս լծեմ·
Գութանի խոփը թո՛ղ հողը պատռի,
Որոմի արմատ շաղ տայ դէս ու դէն...
Իսկ ես յենուած իմ եզանց լծին
Անոյշ պաչելով նրանց աչերին՝
Երգեմ այս երգը, երգը գեղջուկի՝
Խրախոյս տալով տնքող եզներին.
«Վարի գութան, դէ՛ վարի,
Կոշտ գետինը դու փորի,
Եւ սուր խոփդ անտրտունջ
Բլրակները թո՛ղ ճղի։
Վարի՛ գութան, համարձակ,
Ներքին շերտը շուռ ածա՛,
Մի ծուլանար բնաւին,



Գործից խոփդ պսպղայ...
Իսկ եզներ, դուք քաշեցէ՛ք
Հողում թաղուած գութանին,
Որ նա կտրի արմատը
Վնասակար փշերին...
Եզնե՛ր, եզնե՛ր, ձեզ մատաղ,
Տարէք լուծը գութանի,
Մի՛ վախենաք-ամառը
կառնէք վարձը ձեր ումի։
Անգին գութան· սուր գութան,
Հարթիր դաշտեր դու խոպան,
Քեզնով ապրի–շունչ առնի՝
Ամեն անդամ մարդկութեան»...

19 Հոկտեմբերի· 1883 թ ԱՐԻՆԳ·
Շուլաւէր·

---

## ԾԻՂ

Բարձրացրիլես, փոքրիկ ծիլ,
Քո գլուխը համարձակ·
Չե՞ս տեսնում որ քանի աչք
Քեզ են դիտում շանթարձակ...
Արեգական ճառագայթ
Քեզ ույժ տուեց՝ ծլեցիր,
Փոքրիկ արմատդ աներկիւղ
Դէպ՝ խոնաւ հողն ուղղեցիր։
Բայց գիտե՞ս որ նորատին
Շատ թշնամի կունենայ,
Թոյլի վրայ ամենն էլ
Կը յարձակուին անխնայ...
Չեն խնայել բնաւին
Քո մատաղհաս հասակին·
Զօրեղը շատ սակաւ է
Պաշտպան կանգնում տկարին...

Իսկ դու անվախ, աներկիւղ
Քո մէջ մեծ ոյժ զգացիր,
Որ ամենի առաջից
Քո գլուխը հանեցիր...
Եւ արևը նշոյլով
Խրախուսեց, քեզ գգուեց,
Քո համարձակ զօրութիւն
Բոլոր սրտով նա սիրեց։
Եթէ այդ մեծ զօրութիւն
Դու քո մէջը շատ ունես,
Ամեն արգելք ոչինչ են,
Դու կը ծաղկես, բողբոջես...

5 Օգոստոսի. 1884 Շուլաւէր.

ՍՐԻՆԴ

---

I

## ԹԵԻԵ՛Ր ՏՈՒԷՔ...

Թեւե՛ր տուէք, որ սլանամ
Դէպ անապատն երկնքի,
Կարօտ սրտով զգուեմ անվերջ
Ջինջ աստղերին տարիքի։
Կուզեմ փարուել դալուկ լուսնի
Մելամաղձոտ շողքերին,
Վշտոտ սրտիս դարտը խառնել
Անվիշտ սրտի յոյզերին։
Կուզեմ հրրճուել, սքանչանալ
Համաստեղեան ջինջ փայլով,
Մարած, հանգած, սիրտըս ցաւոտ՝
Նորից լցնել յոյսերով։
Ա՜խ, ինձ թողէք անվերջ սիրով
Աստեղց երգը լսելու,
Լաց ու արցունք մոռքէս հանած
Թռչել հեռո՜ւ ու հեռո՜ւ.



Այն տե՛ղ, ուր չէ՛ հասել միտքը,
Սիրտը երբէք – թեւարկել,
Այնտեղ կուզեմ մենակ մնալ,
Այնտե՛ղ կուզեմ ես ապրել։
Կամ անկայուն ամպերի հետ
Անվերջ անել վեր ու վար,
Ուժգին հողմի թեւերի հետ
Տարերքն անցնիլ ծայրէ ծայր.
Եւ բարձրանալ, հասնիլ այնտեղ,
Ուր միշտ լուռ է ու անդորր,
Ուր չ՚գիտեն ի՞նչ է մարդը՝
Ի՞նչ է սիրտը վիրաւոր....

1899 Հոկտ. 3.

II

## ՓՈԹՈՐԻԿ

Ահեղ ծովը որոտում էր
Քամու ուժգին շառաչից,
Վիրաւորուած հեկեկում էր
Եւ հառաչում խոր ցաւից։
Եւ փոթորկած այն ծովն ահեղ
Մերթ խոր, հանդարտ էր լալիս,
Իսկ մրրիկը վիշտը ծովի՝
Անսանձ քամուն էր տալիս։
Երկա՜ր շաչեց անհուն ծովը
Ափ ու յատակ աղմըկած,
Երկար թափեց աւազ, փրփուր
Տանջուած սրտէն կատաղած:
Բայց և անցաւ փոթորիկը...
Լռեց քամին ահաւոր,
Ալիքները արագ ու լուռ
Ափ վազեցին գըլխիկոր։
Եւ այդ ժամին դեռ ծովն յոգնած
Ափերի մէջ կը հևար,
Սիրտը պըղտոր, մութ արցունքով
Ցաւը կերգէր ու կուլար։

Ո՜ շատ երկար ալիքները
Խփում էին իրարու,
Ցնշում լացը տանջուած սրտի,
Ցնշում վիշտը սրտառու։

——

Ա՜խ, իմ սրտից էլ անցաւ, գնաց
Մի փոթորիկ ահաւոր,
Բայց և սի՜րտըս, սիրտըս յոգնած՝
Դեռ լալիս է սրգաւոր···

1899· Սեպտ· 9

III

# ՄՕՐՍ

Անյոյս, յոգնած թափառում եմ
Տանջուած սիրտըս ցաւով լիք,
Սրտից նման սիրտ չեմ գտնում
Դարդով լցուած իմ մէրիկ։
  Մելամաղձոտ լուսնի բոյրը
  Շնչից նման անուշ չէր,
  Այն պսպղուն աստեղց երգը
  Ձայնից նման թովիչ չէր։
Վառ արևի այրող տապը
Կեանք չ'տուեց իմ սրտիս
Սիրտդ եմ ուզում, որ սրտիս մօտ
Կեանք տար սառած յոյսերիս։
  Կուզեմ կտրել ծով ու ցամաք
  Հասնել քեզի իմ մայրիկ,
  Դարդըս պատմել դարդից խառնել
  Որ միասին լաց լինինք։
Խորթ մօր պէս են ինձ փայփայում
Օտար երկինք ու հովեր,
Ախ, ինձ տուէք իմ երկինքը,
Կարօտ մօրս արցունքներ···

1899 Հոկտ· 13



IV

# ԱՂՕԹՔ

Ես մեղաւոր եմ, ներիր ինձ, Աստուած,
Որ քո պատուէրից երես եմ դարձնում,
Եւ անյոյս, անզօր կեանքի ալմի մէջ՝
Քո տուած խաչը ինձ ծանր եմ գտնում։
  Ո՜, մեղաւոր եմ, որ ազատ սիրտըս
  Անարգ շղթայով ես կապկապեցի,
  Որ իմ անարատ ու անբիծ հոգիս
  Աշխարհի տղմով ապականեցի···
Ես մեղաւոր եմ, որ նախանձեցի
Փրկութեան համար տուած կուի մէջ.
Որ արնով ցօղած «մեղքերի» սիրոյն
Զուզեցի տանջուել, կռիւ տալ անվերջ։
  Ների՛ր ինձ, ո՜վ Տէր, որ ես չ'կրցայ
  Ամբոխի ծաղրը լռութեամբ տանել,
  Որ իմ անյողդողդ ու հզօր հոգուս
  Մի անգութ մահով չ'թողի մեռնել։
Ներիր ինձ փրկիչ, որ անփոյթ անցայ՝
Երբ ես անպարտին տեսայ անարգուած,
Կամ երբ ամօթխած ճշմարտութիւնը
Խնդրում էր լալով մի կտոր չոր հաց։
  Բայց, Տէ՜ր, ես կերդնում յանցանքըս քաւել,
  Արիւնոտ խաչըս վերցնում եմ ահա·
  Ամբո՜խ, մեկնիր ինձ փշեղէն պըսակ,
  Անվախ ես կերթամ դէպի Գողգոթա···

1899 Թ· Նոյեմբ· 7

ՊԵՏ· ՄՈՃՈՌԵԱՆ·

I

## ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Նանիկ արա անուշ բալէս,
Նանիկ արա մեծանաս
Քեզ երգ կերգեմ, օ՛ր օ՛ր կասեմ
Ու չե՛մ թողնէ որ դու լաս։
  Քեզ սև օրով ես կը պահեմ
  Որ մեծանաս իմ սիրուն,
  Ապա մի օր քեզ կը պատմեմ
  Թէ ի՞նչ եկաւ քո գլխուն։
Ծնածդ օրից մինչև այսօր
Մենք չ՚տեսանք ուրախ օր,
Կեանքը մըթնեց մեզի համար,
Բաղդը դարձաւ սըգաւոր...
  Ես քեզ կը տամ կոտրած մի սուր
  Որ քո արնով է ներկուել,
  Քեզ ցոյց կը տամ այն չար մարդուն,
  Որ քեզ կուզէր խողխողել։
Մենք միասին կերթանք լալու
Այնտեղ, ուր հայրդ մեռաւ,
Քեզ ցոյց կը տամ այն արիւնը
Որ քո վէրքէն թափուեցաւ։
  Մեր հայրենի տան մեղի մէջ
  Դու կը տեսնես սև կոյտեր,
  Որոնց տակին, անուշ բալէս,
  Եղբայրներիդ են թաղել...
Դու չես մոռնայ ինչպէս մի օր
Մենք հեռացանք մեր երկրից,
Անտուն, անտէր հաց խնդրեցինք
Օտարների դըռներից։
  Դու սուր կառնես, թէ մի գըրիչ
  Այդ դու գիտես իմ որդի,
  Միայն թէ քեզ, անարգ սրտով,
  Ողջ աշխարհն էր թըշնամի։



Նանիկ արա, լաց մի՛ լինի
Քեզ փրկել եմ վըտանգից,
Մեծցիր, դարձիր մի քաջ կըռւող
Եւ ոխդ հանիր աշխարհից։
  Քընիր բալէս, նանի՜կ արա,
  Որ բոյ քաշես, մեծանաս,
  Սուգ կը պահեմ, սև կը հագնեմ,
  Մինչև որ դու մարդ դառնաս...

1897 թ. փետրվար 20
Աղէքսանդրապոլ։

II

## ՏԱԿԱՒԻՆ ԳԻՏԵՍ...

Սարկի հոգւով, դու ամեն մի ժամ,
Ականջ ես դնում լիրբ քըքիչներին,
Եւ լսում անփոյթ, ի՞նչպէս են ծաղրում
Քո մտքին իշխող գաղափարներին
Ասա՛ հայ կըտրիճ տակաւին գիտես
      Թէ դու ապրո՞ւմ ես։
Սիրտըդ խոցեցին լալու չեն թողնում
Ինչ որ ունէիր ձեռքէդ խլեցին.
Պատառ չոր հացի դու ձեռք ես մեկնում
Սորված օտարի լեղի ջըրերին...
Ասա՛ ո՛վ հայ մարդ, տակաւին գիտես
      Թէ դու ապրո՞ւմ ես։
Պատիւ չըմնաց ամօթխած դէմքիդ
Ամեն անարգանք կրեցիր սրտում,
Մահուան մատնեցիր սիրասուն որդուդ
Աղջկանդ տեսար լըկոտի գըրկում
Ասա՛ դու՜ հայ կին տակաւին գիտես
      Թէ դու ապրո՞ւմ ես։
Վանքդ քանդեցին, սուրբ խորաններից
Եւ չի՛ բարձրանում սիրոյ մեղեդին,
Քո Եկեղեցու փրկարար բեմից
Անուշ ձայնը վաղուց լըռեցին.
Դու հայ կրօնաւոր, տակաւին գիտես
      Թէ դու ապրո՞ւմ ես։

Քեզ ստիպեցին սրտիդ չ'լսել
Լռել երգերիդ հառաչանքն ուժգին,
Ոխը քո հոգուց ուզեցին հանել
Դուր չի՛ գայ, ասին, երգդ աշխարհին·
Դու էլ հայ պօյէտ, տակաւին գիտես
Թէ դու ապրո՞ւմ ես։

1896 դեկտ. 30

III

## ՄԻԱՅՆ ՄԷԿԸ

Փշրտ էին իմ քընարի
Ցոգնած լարերն անզգայ
Եւ ես անով խորհում էի
«Զլինի՞ այնտեղ կեանք չկայ»։
Եւ խփեցի դողդոջ ձեռքով
Ժանգ ու փշրտ լարերին,
Եւ իմ բազկի մեղմ հարուածից
Լարերն ուժգին ձայն տուին։
Բայց ձայն չհանեց ու լուռ մնաց
Միայն մէկը լարերից,
Ա՜խ, ես տեսայ նորից տրտում,
Որ սիրուած չեմ ոչ ոքից…

1898 Օգոստոս 15 ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՌԵԱՆ
Աղէքսանդրապօլ։

---

I

* * *

Նախշուն թիթեռը
Լոյսի սիրահար,
Կրակի շուրջը
Ուրախ կը թռթռար·



Եւ նա զմայլուած
Լոյսի շողքերից,
Ընկաւ բոցի մէջ
Այրուեց կըրակից։

---

Հոգիս էլ այդպէս
Անվերջ թըռթըռաց,
Սիրոյ շողքի հետ
Ժպտաց ու խաղաց։
Բայց նա է՞լ արդեօք
Նըման թիթեռի
Սիրոյ կըրակով
Պէտքէ այրուի։
Եւ այդպէս մի օր
Կընկնի ոտքի տակ,
Առանց կարեկից,
Առանց նըպատակ…

1901 Թ. Օգոստ 12
Աղէքսանդրապօլ։

II

## ԱՀԱ ԳԱԼԻՍ ԵՄ…

Ահա գալիս եմ
Երկընքի ամպեր,
Ինձ ճամբայ տուէք
Եւ դո՜ւք, ո՛վ աստղեր։
Կուզեմ պատառել
Երկինքն առարկու
Եւ թըռչել անվերջ,
Թըռչել շատ հեռու։
Կուզեմ հեռանալ
Այս անապատից,
Ուր ճամբորդ էի
Հեռու աշխարհից·

Ուր ես չգտայ
Ինձ նման էակ,
Ուր սիրտըս մնաց
Միշտ խեղճ ու մենակ.
Ուր չ՚ կամեցան
Իմ հոգիս տեսնել,
«Օտար ես դու մեզ»
Ասին ամենքն էլ։
Եւ այդ տեղ անշուշտ
Այդ խոր վայրերում,
Մէկը կը տեսնի
Թէ ի՞նչ եմ զգում։
Ի՜նձ, որ իմ հոգուս
Այրուած սրտիս մէջ
Սէրն է անվաղճան,
Կրակն է անվերջ...

7 դեկտ. 1899 թ.
Աղէքսանդրապոլ։

III

## ԱՆՎԵՐՋ...

Ա՜խ, ես մենակ, անյոյս, անոք
Ապրում եմ լուռ կեանքի մէջ,
Ուր տարիներն աննպատակ
Կանցնին արագ ու անվերջ:
Ուր որ սիրտը դեռ անզօր է
Կեանքի ցաւովն է մաշվում,
Ջերմ սէր, արցունք, կարօտ ու լաց
Նա չի՛ գտնում աշխարհում։
Եւ այս կեանքի խոր գիշերին
Աստղերն անզօր են փայլում,
Եւ թախծալից լուսինն աղօտ
Երկնից շողեր է մաշում։
Իսկ ես անվերջ սուգս եմ անում
Այս ահաւոր գիշերին,
Որ անզօր եմ և չե՛մ կարող
Մի նոր լոյս տալ աշխարհին:



Ա՜խ, ինձ քիչ են փայլ ու շողեր,
Ես չե՛մ ուզում աստղ լինել,
Ո՛չ էլ որպէս տժգոյն լուսին
Լուռ երկնքից շող ցօղել։
Աստղերի փայլ, լուսնու շողեր
Վաղ–ուշ կերթան, կը կորչին,
Անյիշատակ, առանց հետքի՝
Երկնից խորքում կը հանգչին.
Իսկ ես կուզեմ անվերջ փայլել,
Անվե՜րջ, հըպարտ ու ուժգին...
Ա՜խ ես կ՚ուզեմ սէր ու արցունք
Անվերջ շաղ տալ աշխարհին...

1899 թ. Նոյեմբեր 2.
Աղէքսանդրապոլ։

IV

## ՆԵՂ Է ԱՇԽԱՐՀԸ

Սև հողի վերայ
Անապատ կեանքում,
Սիրտըս ամայի
Անյոյս է հևում։
Մի անլուռ աղմուկ
Ճնշում է հոգիս,
Չի՛ տալիս դադար
Անսանձ մըտքերիս.
Եւ որպէս հողմի
Ձեռքին խաղալիք,
Կտրում եմ ամպեր
Ու հասնում երկինք,
Ու նորից արագ
Աշխարհ եմ իջնում,
Անապատում լուռ
Նորից թափառում...
Եւ խուլ վայրերում
Ծուարուած ամենքից,
Տանջող յոյզերով
Զգում եմ նորից՝

Որ իմ անհաւոր
Թևերի համար
Նեղ է երկինքը՝
Նեղ և է աշխարհ...

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՌՆԵԱՆ

Թիֆլիս. 18 չոկտ. 99

---

I

## ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ

Նայում եմ առաջ – երկու ճանապարհ
Բաց է իմ դիմաց. մէկը տանում է
Շըքեղ, բաղտաւոր, նուիրական աշխարհ
Քնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկումէ
Գարունը սիրոյ երկնքից օրհնած:
Այնտեղ անթառամ վարդի պըսակներ,
Երջանիկ օրեր սիրով զարդարուած
Եւ վայելչութեան անձկալի ժամեր
Աշխատաւորի վաստակած գլխին
Պիտի պարգևեն հանգիստ խնդագին:

* * *

Միւսն անապատ ինձ դուրս է հանում,
Որ կարօտում է մըշակող բազկի:
Այստեղ պերճափառ վարդ չէ բուսանում,—
Միայն տատասկը և փուշը վայրի.
Եւ կեանքը մեռած և օդը խեղտող,
Սրտացաւ խընամք, եթէ այդ լինէր
Միշտ երախտամոռ հոգուց ստնակոխ.
Չէ ժպտում արև, սևաթոյր ամպեր
Գոռ փոթորիկ են երկրին գուշակում:—
Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում,
Ո՞ւր իմ անհաստատ քայլերըս ուղղեմ,
Արդեօք երկուսից ես ո՞րը ընտրեմ:



* * *

Այնտե՛ղ, զգում եմ, փարթամ, երջանիկ
Գըլորուելու են իմ կեանքի օրեր.
Աչագեղ կոյսը հայեացք չքնաղիկ
Պարգևում է ինձ, և սըբանըւէր
Նոճիների տակ պիտ՝ գլուխս հագչի
Նըրա մարմարիոն կուրծքին նազելի,
Եւ պիտի գըտնեմ այն վառ աչերում
Ես դըրախտավայել մի վայելչութիւն..

* * *

Այստեղ ականջըս փայփայելու չէ
Կանաչ պուրակում թռչնոց մեղեդին,
Ոչ պիտի տեսնեմ սըփռող թաւիշէ
Ես անուշաբոյր ծաղկոտ մարգերին:
Ո՛չ–արիւն–արցունք. լըքեալ հառաչանք,
Անտէր ամբոխի անվերջ տառապանք.
Արդար քըտինքով մըշակած գետին
Աւարի մատնած–անհա իմ բաժին:

* * *

Բայց այնտե՛ղ կեանքը չունի նըպատակ
Բացի անձնական քաղօրութիւնից,
Իսկ այստե՛ղ գործի ասպարէզ արձակ,
Ազնիւ և վսեմ, թէև փըշալից:—
Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում...
Կեանք, ինձ երկուսից ո՞րն ես պատրաստում:

1883, 1 Մարտի.

II

## ՀԱՏԻԿ

Լոյսը բացվում է, շուտ արտը գընամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրո՛ւն հատիկ, քեզ նրան պահ տամ
Մինչև օրերը ամրան արևի.

Թաղեմ քեզ, հայրի՛կ, և դարդըս քեզ հետ.
Թէ Աստուած ուզեց, դու կանաչեցի՛ր,
Թող դարդըս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձի՛ր։
Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ։
Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձընեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հայրի՛կ, ծարաւ չըթողնեմ։
Ծըլի՛ր, կանաչի՛ր, ոսկէ սաւանով
Ծածկի՛ր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շըշիւնով
Տո՛ւր ջարդուած սրտիս մի քուն հանգստեան,

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

1886, 2 Ապրիլի

---

I

## ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍ.

Անլոյս խաւարը, չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ
Ապառաժ սրտով կործանել էին
Խանդավառ զգացման պատկեր գեղեցիկ.
Անցած օրերի մաքուր պարզութիւն
Ապականութեան ասպարէզ դարձած,
Էլ չէր կարմրում նենգամըրտութիւն,
Առաքինութեան փառքըն էր շիջած...

* * *

Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
Եւ բեթղեհեմից նոր արև ծագեց,
Այրից առաջին ճիչը Մանուկի
Փրկութեան ժամը մարդկանց աւետեց.



Նըրա ժպիտն էր, որ անհուն սիրով
Սրտերի սառուցն պիտ' հալեցընէր,
Եւ մարդկութիւնը Նըրա շըթունքով
Ճշմարտութիւնը պիտի ուսանէր։

1886. 1 Ապրիլի.

II

## ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Տեսե՞լ ես արդեօք այն բըլուրները,
Ուր ճոխ ծաղկումէ մշտական գարուն.
Կանաչում թաղուած այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում։
Տեսե՞լ ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացուած այնտեղ վառ շուշան, մեխակ,
Շնորհատու արև, ոսկի նըշոյլներ
Եւ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ։
Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փրփըրած,
Ականջ դըրե՞լես խըռոված հոգով
Այն աղմկալից գոռոցին ալեաց։
Տեսե՞լ ես գիւղը հովտի մէջ մենակ
Եւ շուրջը փռուած շքեղ պարտէզներ,
Եւ ոսկի հասկեր և խաղաղ վըտակ,
Լըսե՞լես քաղցրիկ արտուտի երգեր։
Եւ դու տեսե՞լ ես նըրա զանձն անգին,
Դէմքով հըրեշտակ, հասակը փարթամ
Հարաւոյ դուստրը, հրապոյրքն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժըպիտն անթառամ...
Սիրատանջ այրուած քնքուշ այտերից
Քաղե՞լ ես համբոյր, որ քաղցր է մեղրից։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

1880. 17 Հոկտեմբերի.

## ՄԱՅՐ-ԳԱՂԱՓԱՐ

*Քանի՛ մայրը մեծ երկունքով*
*Բերում զաւակ լոյս-աշխարհ,*
*Քեզ եմ յիշում ծանր կեանքով,*
*Ո՛վ մօրերի Գաղափար...*

Անկողնի մէջ մայրը պառկած՝
Ցաւ ցաւից կը տանջուէր,
Այնպէ՜ս ցաւով, որ թուլացած՝
Կարծես կեանքից կ'անջատուէր:
Գունատ դէմքով—դալկահարուած
Աչք էր ձգել Երկնքին,
Աղօթումէր. «ո՛վ Տէր Աստուած,
Դու խնայէ իմ կեանքին»:
Եւ անկողնում տառապանքով
**Ցղխութեան** խոր դարդից
Չարչարվումէր նա երկունքով
Զաւակ ծնել արգանդից։
Բայց տանջվումէր, տանջվում երկա՜ր.
Կեանքը հասցրած մահուան դուռ.
Ափսո՛ս, ցաւին օգնող չըկար,
Նա տանջվումէր մենա՛կ, լո՛ւռ...

* * *

Արդէն ահա՜ ժամը հասաւ.
Ծընեց զաւակ դէպի լո՛յս.
Խնդաց մայրը, երբ նա տեսաւ
Զըխորտակուած վերջին յոյս...

* * *

«Որդեա՜կ», — մայրը փափայումէր՝
Գիրկը առած զաւակին.
«Մայրի՜կ», — որդին համբուրումէր՝
Ուրախ փարուած մօր վզին...



Եւ այնպիսի՜ քաղցր ձայնով,
Որ ամենքին դիւր եկան.
Ուղիղ կեանքի անկեղծ սիրով,
Աշխարհի մէջ գովական...

* * *

Անցա՜ն տարիք. մայրը մեռա՛ւ
Որդուն թողեց սուգի մէջ.
Այն երջանիկ կեանքը սառաւ.
Ողբա՜ց որդին մինչև վերջ։
Արցունքները թափվում են ծոր
Նրա աչքից աննման.
Բայց նա ցօղից շա՜տ փառաւոր
Ծաղիկներով գերեզման...

* * *

Ո՛հ, այդ ժամին քեզ եմ յիշում,
Ո՛վ-գաղափար հանճարի,
Դու էլ նոյնպէս ծնունդ ես առնում
Մտաւորական աշխարհի
Ինչպէս մանուկն կերպարանքով
Գոյանումէ արգանդում,
Դու էլ մտքի պատկերներով
**Կեանք** ուղեղին աւանդում։
Աշխարհի մէջ մայրը ինչպէս
Զաւակ ծընում շա՜տ երկունքով,
Մարմնանումես դու էլ նոյնպէս
Մտքի ծանր աշխատանքով։
Թէպէտ քո տէր հեղինակը
Պառկած է լո՛ւռ գերեզմանում,
Բայց դու նրա յիշատակը
Ազգերի մէջ վառ պահպանում.
Եւ տըխուր անմեռ կեանքով
Քո տարածած սերմերի՝
Ազգը անկեղծ մեծարանքով
Անուշահոտ, խնկելի,
Շքեղ պըսակ դնում ճակտին
Կամ բարձրացնում յուշարձան,
Ծաղիկներով ինչպէս որդին
Ցօղից մօրը գերեզման...

* * *

Քանի՛ մայրը մեծ երկունքով
Բերում զաւակ լոյս-աշխարհ,
Քե՛զ եմ յիշում ծանր կեանքով,
Ո՜վ մտքերի գաղափար…

Շուլաւէր. ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆ.

---

* * *

Ճիկամած արփին յոգնած, դալկահար
Դէպի գիշերուան մուտքն է խոնարհվում.
Խաղաղ երեկոն, փափկութեամբ լցուած,
Երկրին անուշիկ հանգիստէ բերում։
Լուռ մայր են մտնում արևի նըման
Սրտիս խորքերում լալագին վշտեր,
Երկինք են թռչում իմ շրթունքներից
Սիրով տոգորուած քացրիկ աղօթքներ։
Եւ կիսախաւար չքնաղ երեկոն
Նոր ոյժէ տալիս իմ ցընորքներին.
Դալկահար մահուան քունն էլ իր թևով
Դիպչում է կամաց իմ շրթունքներին:
Եւ թըւում է ինձ, որ ամեն վայրկեան
Կեանքի սանդուղքից ես ցած եմ իջնում
Դէպի սառնաշունչ, մռայլ գերեզման…

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

1893 թ. 31 Օգոստոսի.
Նոր-Նախիջևան.

---

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ